ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«25» հունվարի 2023 թվականի № 89-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24 -րդ կետով, 41-րդ հոդվածով , <<Քաղաքացիական պաշտպանության մասին>> օրենքի 9-րդ հոդվածի <<գ>>կետի դրույթներով և ի կատարումն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2004 թվականի ապրիլի 22-ի <<Քաղաքացիական պաշտպանության պլանների մշակման կարգը սահմանելու մասին >> N633-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ և 5-րդ կետերի <<զ>>և 6-րդ կետի <<ը>> ենթակետերի՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի քաղաքացիական պաշտպանության 2023 թվականի պլանը համաձայն հավելվածի,

2.Հանձնարարել՝

Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքացիական պաշտպանության հարցերով պատասխանատու՝Գևորգ Հովհաննիսյանին.

1)Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի քաղաքացիական պաշտպանության պլանի մեկ օրինակը տրամադրել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարարական ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչությանը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Недействительная подпись

ԱՐԹՈՒՐ ՊԱՊԻԿՅԱՆ

ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա. ՊԱՊԻԿՅԱՆ**

Հաստատում եմ՝
Գյումրի համայնքի ղեկավարին՝
փոխարինող՝ Ա.Պապիկյան
<< >> _____ 2023թ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Գյումրիի համայքնի ղեկավարի 2023թ
հունվարի 25-ի 89-Ա որոշման

ԳԼՈՒԽ I.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ԲԱԺԻՆ 1.

Պլանի սահմանումը և պլանի նպատակը

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարանի քաղաքացիական պաշտպանության պլանը՝ (այսուհետ՝ Պլան) Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից պատերազմ հայտարարվելու դեպքում, կազմակերպության խնդիրները, գործառույթներն ու դրանց իրականացման կարգը կանոնակարգող փաստաթղթերի փաթեթ է՝ ուղղված կազմակերպության անձնակազմի և նյութական արժեքների պաշտպանությանը:

2. Պլանը սահմանում է Կազմակերպության քաղաքացիական պաշտպանության համակարգը ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրման, ռազմական դրության ժամանակ գործունեության, աշխատողների պաշտպանության կազմակերպման, բնագավառի գործունեության կայունության ապահովման, փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացման, համակարգի կառավարման, ինչպես նաև ռազմական դրության ժամանակ Կազմակերպության վրա դրված այլ խնդիրների կատարման կարգը, ծավալներն, ուժերն ու միջոցները:

ԲԱԺԻՆ 2.

Պլանում ներգրավվող մարմինները և նրանց գործառույթները

3. Պլանում ներգրավված են՝

1) համայնքապետարանը.
2) համայնքապետարանի տարահանման հանձնաժողովը.
3) համայնքապետարանի քաղաքացիական պաշտպանության կազմավորումները:
4) ՔՊ ծառայություններ:

4. ՔՊ մարմինների գործառույթները՝

1) Կազմակերպության գործառույթներն են՝

ա. իրենց աշխատողների պաշտպանության իրականացումը.

բ. փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ ուժերի ստեղծումը.

գ. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը:

2) Տարահանման հանձնաժողովի գործառույթներն են՝

ա.կազմակերպության աշխատողների տարահանման միջոցառումների կազմակերպումը և իրականացումը:

3) Քաղաքացիական պաշտպանության կազմավորումների գործառույթներն են՝

ա. ՔՊ միջոցառումների իրականացումը.

4)ՔՊ ծառայությունների գործառույթներն են՝

ա)կազմակերպությունում ՔՊ միջոցառումների իրականացման ապահովումը:

ԲԱԺԻՆ 3.
ՊԼԱՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

5. Պլանի իրավական հիմքերն են՝ Հայաստանի Հանրապետության օրենքները, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումները և այլ իրավական ակտեր՝

1) «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքը,
2) «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքը,
3) «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենքը,
4) «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքը,
5) Հայաստանի Հանրապետության կառավարության 2004թ. ապրիլի 22-ի «Քաղաքացիական պաշտպանության պլանների մշակման կարգը սահմանելու մասին» 633-Ն որոշումը,
6) Հայաստանի Հանրապետության կառավարության 2000թ. հոկտեմբերի 25-ի «Բնակչությանն անհատական պաշտպանության միջոցներով ապահովելու կարգը հաստատելու մասին» N679 որոշումը,
7) Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. դեկտեմբերի 18-ի «Վտանգավոր տարածքներից բնակչության տարահանման կարգը հաստատելու մասին» N 1180 որոշումը
8) Հայաստանի Հանրապետության կառավարության 2000թ. սեպտեմբերի 28-ի «Բնակչության պատսպարման կարգը հաստատելու մասին» N 592 որոշումը,
9) Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թ. ապրիլի 10-ի «Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների ստեղծման, նախապատրաստման և գործունեության կարգը սահմանելու մասին» N 384-Ն որոշումը,
10) Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թ. նոյեմբերի 15-ի «Քաղաքացիական պաշտպանության կազմավորումների ստեղծման, նախապատրաստման և գործունեության կարգը սահմանելու մասին» N 1532-Ն որոշումը,
11) Հայաստանի Հանրապետության կառավարության 2017թ. ապրիլի 6-ի N 346-Ն որոշումը ՝«Հայաստանի Հանրապետության տարածքում արտակարգ իրավիճակների առաջացման կամ դրա սպառնալիքի,Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ հայտարարելու դեպքում ու ռազմական դրության պայմաններում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների,կազմակերպությունների,բնակչության ազդարարման և իրազեկման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին»
12) Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թ. հունվարի 30-ի «Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և բնակչության ուսուցման կարգը սահմանելու մասին» N 134-Ն որոշումը,2015թ հունվարի 22-ի N46-Ն որոշումը:
13)Հայաստանի Հանրապետության կառավարության 2004թ. հուլիսի 29-ի «Ճառագայթային, քիմիական և մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգի ստեղծման և գործունեության ապահովման կարգը սահմանելու մասին» N 1064-Ն որոշումը,

14)Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 22-ի «Հայկական ատոմային էլեկտրակայանի միջուկային և (կամ) ճառագայթային վթարների դեպքում բնակչության պաշտպանության ազգային պլանը (Հայկական ատոմային էլեկտրակայանի արտաքին վթարային պլան) հաստատելու մասին» N 2328-Ն որոշումը,

15)Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. հունիսի 24-ի «Տարահանված բնակչության տեղաբաշխման վայրերում կենսաապահովման կարգը հաստատելու մասին» N 824-Ն որոշումը:

ԳԼՈՒԽ II.
ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ՀԱՐՁԱԿՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

ԲԱԺԻՆ 1.
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

6. Գյումրու հանայնքապետարանը գտնվում է համայնքի տարածքի կենտրոնական մասում:

7. Համայնքապետարանի տարածքը կազմում է 8200 մ^2, աշխատողների թիվը՝252 Կազմակերպության անձնակազմի թվաքանակը ըստ տարիքի և սեռի կազմում է

1) 17-ից բարձր կին – 112
2) 17-ից բարձր տղամարդ - 140

8. Համայնքապետարանի ջրամատակարարումն իրականացվում է 9 կետերից, ջրամատակարարման խողովակների ընդհանուր երկարությունը կազմում է 350մ: Կազմակերպությունում գազամատակարարումն իրականացվում է 1 կետից, առկա գազի 250մ. երկարությամբ խողովակաշարերով:

9. Համայնքապետարանի էլեկտրամատակարարման գծերի ընդհանուր երկարությունը կազմում է 22000մ.: Կազմակերպության քաղաքացիական պաշտպանության հիմնական ցուցանիշները ներկայացված է աղյուսակ N2 - ում:

ԲԱԺԻՆ 2.
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՎԱՆԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ՝ ՁԵՆՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԵՎ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ԴԻՎԵՐՍԻՈՆ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ

10. Հավանական հակառակորդի զինված ուժերի ավիացիայի, հրթիռահրետանային և դիվերսիոն հետախուզական խմբերի ազդեցության թիրախ համայնքում հնարավոր է հանդիսանան՝

1) վարչական շենքը, արտադրամասերը, մասնաշենքերը.
2) ջրամատակարարման աղբյուրները.

3) ֆիքսված և բջջային հեռախոսակապի հանգույցներն ու ապահովող սարքավորումները:

ԲԱԺԻՆ 3.

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍՏԵՂԾՎՈՂ ՀՆԱՐԱՎՈՐ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

11. Հակառակորդի գործողությունների արդյունքում կազմակերպության տարածքում հնարավոր է առաջանա հետևյալ իրավիճակը՝

Զենքի տեսակների կիրառման դեպքում շենքերը եւ շինությունները կարող են կրել տարբեր աստիճանների վնասվածքներ, որոնք բաժանվում են՝ լրիվ, ուժեղ, միջին ու թույլ:

12. Լրիվ վնասվծության դեպքում փլատակներում հիմնականում շենքերի, շինությունների կրող կոնստրուկցիաների, սարքավորումների, կահույքի մասեր են: Կարող են քանդվել նաեւ պաշտպանական կառույցների ծածկերը, մուտքի պաշտպանիչ դռները, շարքից կարող են դուրս գալ ներսի բոլոր սարքավորումները, հնարավոր է, որ բոլոր պատսպարվածները զոհվեն: Լրիվ վնասվծության դեպքում շարքից կարող են դուրս գալ նաեւ գազատար եւ ջրատար խողովակները: Կամուրջների լրիվ վնասվածության դեպքում, կամուրջների թռիչքները դեֆորմացվում են եւ երթեւեկությունը կամուրջներով կարող է վերականգնվել հենարանների թռիչքների ուժեղացման աշխատանքներից հետո:

Միջին եւ թույլ վնասվածության դեպքում հիմնականում վնասվում են շենքերի և շինությունների կտուրները, իսկ հիմնական կոնստրուկցիաները պահպանվում են:

13. Կազմակերպության տարածքի նկատմամբ հակառակորդի գործողությունների հավանականությունը շատ փոքր է, ուստի շենքերի և շինությունների ավերվածության և իրավիճակների առաջացման հավանականությունը նույնպես փոքր է:

14. Քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպման և անցկացման վրա ազդող առանձնահատկությունները՝

1) ընդհանուր օգտագործման տեղական նշանակության ավտոճանապարհների ինժեներական կառույցների վնասման պարագայում անհնար կդառնա անձնակազմի տարահանումը և փրկարարական ուժերի առաջանցումը դեպի վնասված տեղամասեր.

2) կընդհատվի ֆիքսված և բջջային հեռախոսակապն ամբողջովին.

3)հեռուստաաշտարակների վնասման դեպքում կընդհատվի կենտրոնական հեռարձակման ալիքների հաղորդումները, տեղական հեռուստաալիքների վնասման դեպքում տեղական հեռարձակումը.

ԳԼՈՒԽ III

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԽԱՂԱՂ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՑ ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵԺԻՄԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

ԲԱԺԻՆ 1.

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԽԱՂԱՂ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՑ ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵԺԻՄԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

15.Կազմակերպությունը զբաղվելով իր ամենօրյա աշխատանքային գործունեությամբ, պետք է պատրաստ լինի քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացմանը:

1) Կազմակերպությունը քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացմանը պատրաստ լինելու համար, իր իրավասության սահմաններում իրականացնում է քաղաքացիական պաշտպանության նախապատրաստական միջոցառումներ՝

ա. կազմակերպությունում ստեղծվում են քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ՝ փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացման նպատակով.

բ. իրականացվում է կազմակերպության ՔՊ ղեկավար կազմի և անձնակազմի ուսուցում.

գ. իրականացվում է պաշտպանական կառույցների նախապատրաստում.

դ. կուտակում է անհատական պաշտպանության միջոցների եւ քաղաքացիական պաշտպանության նպատակով այլ գույքի անհրաժեշտ պաշարներ.

ե. մշակվում է կազմակերպության քաղաքացիական պաշտպանության պլան:

2)Կազմակերպության քաղաքացիական պաշտպանության համակարգը Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ռազմական դրություն հայտարարվելու դեպքում փոխադրվում է ռազմական դրության աշխատանքային ռեժիմի սահմանված կարգով:

ԲԱԺԻՆ 2.
ԿԱՊԻ ԵՎ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

16. Կազմակերպության քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմի, քաղաքացիական պաշտպանության կազմավորումների ղեկավարների ազդարարման և նրանց հետ կապի ապահովման կարգը ներկայացված է ղեկավար կազմի կառավարման, կապի եւ ազդարարման սխեմայում՝ հավելվաղյուսակ N 3 :

17. Կազմակերպությունում քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման ժամանակ կապը մարզի համայնքների, քաղաքացիական պաշտպանության ծառայությունների, քաղաքացիական պաշտպանության պետերի հետ կազմակերպելու համար օգտագործվում է բջջային և ֆաքսիմիլային կապերը:

ԲԱԺԻՆ 3.
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

18. Քաղաքացիական պաշտպանության հետախուզությունը իրականացվում է Կազմակերպության ամբողջ տարածքում:

19. Հետախուզության նպատակն է իրադրության վերաբերյալ անհրաժեշտ տվյալների ձեռքբերում՝ որոշումներ ընդունելու համար՝ ուղղված աշխատակիցների, աշակերտեների և քաղաքացիական պաշտպանության ուժերի անձնակազմի պաշտպանությանը, ինչպես նաև փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացմանը:

20. Հետախուզության առարկա են հանդիսանում՝

1) վարչական տարածքը, շենքերը և շինությունները.

2) հրդեհների օջախները.

3) անձնակազմի և աշակերտների տարահանման և քաղաքացիական պաշտպանության ուժերի առաջանցման երթուղիները.

4) գազամատակարարման, էլեկտրամատակարարման, ջրամատակարարման և կոյուղու ցանցերի վթարների օջախները.

5) պաշտպանական կառույցները և մարդկանց այլ հավաքատեղիները, շրջակա միջավայրի օբյեկտները.

6)հետախուզությունն իրականացվում է կազմակերպությունում ստեղծված հետախուզության խմբի (կամ դիտարկման կետի) միջոցով:

21.Հետախուզական տվյալները զեկուցում են կապի միջոցներով: Հետախուզության այն տվյալները, որոնք պահանջում են շտապ որոշման ընդունում, զեկուցվում են անմիջապես:

ԲԱԺԻՆ 4.
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

4.1 ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

22. Անհատական պաշտպանության միջոցները նախատեսված են պաշտպանելու մարդու օրգանիզմը, մաշկը և հանդերձանքը ռադիոակտիվ, ուժեղ ներգործող թունավոր նյութերից և մանրէաբանական միջոցներից:

23. Անհատական պաշտպանության միջոցները բաժանվում են 2 խմբի՝ շնչառական օրգանների պաշտպանության միջոցներ և մաշկի պաշտպանության միջոցներ:

24. Շնչառական օրգանների պաշտպանության միջոցներ են հանդիսանում զտող և մեկուսացնող հակագազերը, շնչադիմակները և հասարակ միջոցները՝ փոշի չթափանցող գործվածքային դիմակները և բամբակաթանզիֆային վիրակապերը:

25. Կազմակերպության անձնակազմի և աշխատողների անհատական պաշտպանության միջոցներով ապահովման հաշվարկը ներկայացված է աղյուսակ N 4 -ում:

4.2. ՊԱՏՍՊԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

26. Բնակչության պատսպարումը պաշտպանական կառույցներում մարդկանց կյանքի և գործունեության ապահովման հիմնական միջոցն է: Բնակչության պատսպարումը ռազմական դրության և հակառակորդի հանկարծակի հարձակման կամ դրա անմիջական վտանգի առկայության դեպքում իրականացվում է <<Օդային տագնապ>> ազդարարման ազդանշանով:

27. Կազմակերպության աշխատողները (աշակերտների) պատսպարումն իրականացվում է կազմակերպությունների և բնակելի ֆոնդի նկուղային հարկերում անձնակազմի և աշակերտների պատսպարումն իրականացվում է կազմակերպությունների եւ բնակելի ֆոնդի նկուղային հարկերում:

28.Պատսպարման իրականացումը ապահովելու նպատակով, նախապես կատարվել է կազմակերպության աշխատողների պաշտպանական կառույցներին (նկուղներին) ամրագրման հաշվարկներ:

29.Պաշտպանական կառույցներով չապահովված բնակչությունը մասնակցում է պարզագույն թաքստոցների կառուցմանը, հետագայում դրանցում պատսպարվելու նպատակով:

30.Պաշտպանական կառույցները պատրաստականության են բերվում, պատսպարվողների ընդունման համար ազդանշան տալու պահից սկսաց 12 ժամվա ընթացքում:

31. Կազմակերպության աշխատողների (և աշակերտների) պատսպարման հաշվարկը ներկայացված է աղյուսակ N 5 -ում:

4.3 ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

32. Տարահանումը՝ վտանգավոր տարածքից անվտանգ տարածք՝ մարդկանց, կենդանիների եւ նյութական արժեքների ժամանակավոր տեղափոխումն ու տեղաբաշխումն է:

33. Տարահանումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից պատերազմ հայտարարելու, ինչպես նաև այնպիսի արտակարգ իրավիճակների առաջացման կամ անմիջական սպառնալիքի դեպքում, որի հետևանքով որոշակի տարածքներում (բնակավայրերում, օբյեկտներում) կարող են առաջանալ մարդկանց կյանքի և կենսագործունեության բնականոն պայմանների վրա բացասաբար ազդող գործոններ:

34 Կազմակերպության աշխատողների (և աշակերտների) տարահանման միջոցառումները իրականացվում են մարզի վտանգավոր տարածքներից բնակչության տարահանման պլանին համապատասխան:

35. Զենքի տեսակների կիրառման դեպքում տարահանման մասին որոշում ընդունում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, իսկ հակառակորդի հանկարծակի հարձակման դեպքում՝ համայնքի ղեկավարը և տվյալ տարածքի զինվորական կայազորի պետը՝ իր իրավասության սահմաններում:

36. Կազմակերպության տարահանումը, տարահանված քաղաքացիների ընդունումը և տեղաբաշխումը իրականացնում են տեղական ինքնակառավարման մարմինները:

37. Տարահանման միջոցառումների կազմակերպման և իրականացման նպատակով կազմակերպությունում, քաղաքացիական պաշտպանության պետի որոշմամբ ստեղծվել է տարահանման հանձնաժողով: Հանձնաժողովի նախագահը ի պաշտոնե հանդիսանում է կազմակերպության ղեկավարի տեղակալը:

38. Անձնակազմի տարահանումը կազմակերպելու համար նախատեսվում է տարահանման հավաքակայան՝ դպրոցում:

39. Տարահանման հավաքակայանից անձնակազմը տեղափոխվում է շարասյուներով, նախատեսված տրանսպորտային միջոցներով կամ հետիոտն:

40. Կազմակերպության անձնակազմի տարահանման միջոցառումների անհրաժեշտ հաշվարկները ներկայացված են աղյուսակ N 6 -ում:

ԲԱԺԻՆ 5.
ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ՎԹԱՐԱՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՐԻ ԽՄԲԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

5.1. ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ՎԹԱՐԱՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

41. Հակառակորդի հարվածից հետո իրավիճակի գնահատմանն զուգընթաց իրականացվում է խափանված կառավարման համակարգի վերականգնում և փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպում:

42. Խոցման օջախներում փրկարարական աշխատանքները կանոնակարգելու նպատակով ստեղծվում են աշխատանքային տեղամասեր, որտեղ փրկարարական աշխատանքների անընդհատությունը ապահովելու նպատակով կազմակերպության քաղաքացիական պաշտպանության պետի որոշմամբ սահմանվում են աշխատանքային երկու և ավելի հերթափոխեր:

43. Փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ իրականացնելիս հատուկ ուշադրություն է դարձվում փլված շինություններում տուժածների որոնմանը և բուժօգնության ցուցաբերմանը: Այս աշխատանքներին ներգավվում են ձեռքի գործիքներով և մեխանիզացիայով հագեցված կազմավորումները:

44. Փրկարարական աշխատանքներին ներգրավվում է կազմակերպության, անհրաժեշտության դեպքում համայնքի փրկարարական ՔՊ կազմավորումները:

45. Փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացման հերթականությունը, ձևերը և կատարման կարգը կախված են փլվածքների բնույթից, վթարների տեսակից, երկրորդային վտանգ ներկայացնող գործոններից:

5.2. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՐԻ ԽՄԲԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

46. ՈՒԺերի խմբավորումը Կազմակերպությունում առկա քաղաքացիական պաշտպանության կազմավորումների մի մասն է, նախատեսված կոնկրետ վայրում փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ կազմակերպելու և իրականացնելու համար:

47. ՈՒԺերի խմբավորման կազմը, քանակը և հագեցվածությունը որոշվում է Կազմակերպության քաղաքացիական պաշտպանության պետի հրամանով:

48. Փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու, անընդհատությունը ապահովելու, հանկարծակի առաջացած լրացուցիչ խնդիրների լուծման համար հայտ է ներկայացվում մարզի ՔՊ պետին անհրաժեշտ տեխնիկայով ապահովելու համար:

ԲԱԺԻՆ 6.
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

6.1. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

49. Կազմակերպությունում փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների, տարահանման ու տնտեսական փոխադրումների իրականացման ժամանակ հասարակական կարգի պահպանումը ապահովում է հասարակական կարգի պահպանման խումբը:

50. Բնակչության տարահանման և տնտեսական փոխադրումների դեպքում ավտոճանապարհային երթևեկության կարգավորման կարգախմբերն իրենց ծառայությունը կատարում են հսկիչ-անցագրային երթևեկության կարգավորման կետերում:

6.2 ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

51. Քաղաքացիական պաշտպանության հակահրդեհային պաշտպանությունը կազմակերպչական և ինժեներատեխնիկական համալիր միջոցառումներ են, որոնք ուղղված են հրդեհների կանխմանը կամ տարածման արգելմանը, մարդկանց պաշտպանությանը հրդեհներից, բարձր ջերմաստիճանից և ուժեղ ծխապատված գոտիներից:

52. Կազմակերպությունում քաղաքացիական պաշտպանության հակահրդեհային անվտանգության ապահովման համար պատասխանատու է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարարական ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության համապատասխան տարածքային ստորաբաժանումը, որի աշխատանքներին կարող է մասնակցել կազմակերպության հակահրդեհային խումբը: Հակահրդեհային ապահովման մեջ ընդգրկվում են հրդեհային հետախուզությունը, հրդեհի մեկուսացումը և մարումը:

53.Կազմակերպության տարածքում զանգվածային հրդեհների առաջացման պայմաններում տեղի հրշեջ-փրկարարական ջոկատին աջակցում են քաղաքացիական պաշտպանության կազմավորումները:

54.Պատերազմական ժամանակաշրջանում հրդեհների մարումն իրականացվում է խաղաղ ժամանակաշրջանի մեկնման չվացուցակի համաձայն:

6.3. ԲԺՇԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

55.Հայաստանի Հանրապետության քաղաքացիական պաշտպանության բժշկական ապահովումը միջոցառումների համակարգ է՝ ուղղված մարդկանց աշխատունակության ապահովմանը, տուժածներին և հիվանդներին բժշկական օգնության ցուցաբերմանը, նրանց տեսակավորմանը, տեղափոխմանը բժշկական հիմնարկներ, բուժման կազմակերպմանը, վարակիչ հիվանդությունների առաջացման և տարածման կանխարգելմանը, շրջակա միջավայրի օբյեկտների (մթնոլորտի, ջրային ռեսուրսների, հողի, ընդերքի), ինչպես նաև սննդամթերքի և խմելու ջրի հիգիենիկ և համաճարակաբանական (այդ թվում՝ լաբորատոր) հսկողության կազմակերպմանը:

56.Կազմակերպությունում քաղաքացիական պաշտպանության բժշկական ապահովման համար պատասխանատու է Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության եւ սոցիալական ապահովության վարչության տարածքային ստորաբաժանումները:

57.Կազմակերպության բժշկական ապահովումն իրականացվում է տվյալ տարածաշրջանը սպասարկող բուժ.հաստատության նաև կազմակերպության բուժկետի միջոցով:

6.4. ԼՈՒՍԱՔՈՂԱՐԿՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

58.Լուսաքողարկումը ժամանակակից զենքի տեսակներից քողարկման տեխնիկական ապահովումն է: Այն անցկացվում է մթություն ստեղծելու նպատակով, օրվա ցանկացած ժամին, դժվարացնելով համայնքների և կազմակերպությունների հայտնաբերումը օպտիկական սարքերի միջոցով կամ բարձրությունից՝ տեսանելի հայտնաբերման ճանապարհով:

59..Կազմակերպությունում քաղաքացիական պաշտպանության լուսաքողարկման ապահովման համար պատասխանատու է կազմակերպության ղեկավարը:

60.Լուսաքողարկման գոտում գտնվող կազմակերպություններում լուսաքողարկման միջոցառումներն իրականացվում են նախօրոք:

61.Լուսաքողարկումը նախատեսվում է 2 ռեժիմով՝ մասնակի մթնեցում և լրիվ մթնեցում:

62.Լուսաքողարկման ռեժիմների իրականացման նկատմամբ հսկողությունը սահմանում է կազմակերպության հասարակական կարգի պահպանման խումբը:

6.5. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

63..Քաղաքացիական պաշտպանության հիդրոօդերևութաբանական ապահովումը կազմակերպվում և իրականացվում է խաղաղ, քաղաքացիական պաշտպանության համակարգի խաղաղից ռազմական դրության փոխադրման և ռազմական դրության իրավական ռեժիմի պայմաններում, բնակչության և տարածքների պաշտպանության միջոցառումների ընթացքում հիդրոօդերևութաբանական վտանգավոր երևույթների ազդեցությունը, փաստացի և կանխատեսվող եղանակային պայմանները հաշվի առնելու նպատակով:

64..Կազմակերպության քաղաքացիական պաշտպանության հիդրոօդերևութաբանական ապահովման համար պատասխանատու է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության «Հայաստանի Հանրապետության հիդրոօդերևութաբանության եւ մոնիթորինգի պետական ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպության Շիրակի մարզային հիդրոօդերևութաբանական ծառայությունը:

6.6. ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

65..Քաղաքացիական պաշտպանության տրանսպորտային ապահովումը միջոցառումների համալիր է, որն ընդգրկում է քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման համար նախատեսված բոլոր տիպի տրանսպորտային միջոցների նախապատրաստումը, աշխատունակ վիճակում պահպանումը, բաշխումը և շահագործումը:

66.Կազմակերպությունում քաղաքացիական պաշտպանության տրանսպորտային ապահովման իրականացումն ապահովվում է քաղաքացիական պաշտպանության համայնքային և մարզային տրանսպորտային ծառայությունների կողմից համատեղ կազմակերպության քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմի հետ:

67.Տրանսպորտային և տեխնիկական միջոցների հատկացումն իրականացվում է մարզի քաղաքացիական պաշտպանության պետի որոշմամբ՝ համաձայն Կազմակերպության ղեկավարի կողմից ներկայացված հայտերի:

6.8. ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

68.Քաղաքացիական պաշտպանության ինժեներական ապահովումը միջոցառումների համակարգ է՝ ուղղված բնակչության պաշտպանությանը, քաղաքացիական պաշտպանության ուժերի և միջոցների առաջանցման հիմնական ու շրջանցիկ ուղիների ապահովմանը, խոցման օջախներում և աղետալի ջրածածկման գոտիներում փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպմանն ու իրականացմանը:

69.Կազմակերպության անձնակազմի պաշտպանությանն ուղղված ինժեներական ապահովման կարևորագույն միջոցառում է՝ պատսպարումը պաշտպանական կառույցում:

70.Պաշտպանական կառույցները բերվում են պատրաստականության՝ պատսպարվողների ընդունման համար ազդանշան տալու պահից սկսած 12 ժամվա ընթացքում:

6.9. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՅՈՒՆԱՑՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

71.Երկրորդային խոցման գործոնների առաջացման հավանականության բացասման, նվազեցման նպատակով անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1) էներգամատակարարման, ջրամատակարարման, գազամատակարարման սարքերի անջատում,
2) հակահրդեհային միջոցառումների իրականացում,
3) լուսաքողարկման միջոցառումների իրականացում:

ԳԼՈՒԽ IV.

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ
ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ՀԱՆԿԱՐԾԱԿԻ ՀԱՐՁԱԿՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ

ԲԱԺԻՆ 1.
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

<<ՕԴԱՅԻՆ ՏԱԳՆԱՊ>> ԱԶԴԱՆՇԱՆԻ ԴԵՊՔՈՒՄ

72.<<Օդային տագնապ>> ազդանշանը տրվում է կապի և ազդարարման բոլոր միջոցներով, շարժական բարձրախոսային սարքերի օգնությամբ՝ միացվում են էլեկտրաշչակները և տրվում է տատանվող երկարատև (3 րոպե տևողությամբ) ձայնային ազդանշան:

73.Բնակչության ազդարարելու մասին որոշումն ընդունում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հակաօդային պաշտպանության և ավիացիայի միացյալ հրամանատարական կետից ստացված տեղեկատվության հիման վրա:

74.Բնակչության ազդարարումն իրականացվում է՝ ռազմական դրության ժամանակ, հակառակորդի հանկարծակի հարձակման, հակառակորդի հարձակման սպառնալիքի դեպքում՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության կողմից: Ազդանշանը տրվում է նաեւ մարզի զինվորական կայազորի հերթապահի միջոցով: Ելնելով իրավիճակից ազդանշանի հաղորդմանը զուգահեռ կարող են տրվել նաև որոշակի հրահանգներ բնակչության վարվելակերպի վերաբերյալ: Գործողության մեջ են դրվում Կազմակերպությունում առկա գործող էլեկտրական շչակները՝ լոկալ միցմամբ: Յուրաքանչյուր շչակի միացման համար պատասխանատվություն է կրում տվյալ կազմակերպության ՔՊ պետը:

75.<<Օդային տագնապ>> ազդանշանի դեպքում անհապաղ իրականացվում է հետևյալ միջոցառումները՝

1) լրիվ կամ մասնակի լուսաքողարկում, մշտական էլեկտրասնուցման անհրաժեշտություն ունեցող կազմակերպությունների էլեկտրամատակարարման ապահովմամբ.

2) անձնակազմի պատսպարում կցագրված (կամ մոտակա) պաշտպանական կառույցներում.

ԲԱԺԻՆ 2.
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

<<ՕԴԱՅԻՆ ՏԱԳՆԱՊԻ ԱՎԱՐՏ>> ԱԶԴԱՆՇԱՆԻ ԴԵՊՔՈՒՄ

76.<<Ուշադրություն բոլորին >> ազդանշանը տրվում է կապի և ազդարարման բոլոր միջոցներով, շարժական բարձրախոսային սարքերի օգնությամբ՝ միացվում են էլեկտրաշչակները և տրվում է անընդհատ երկարատև (3 րոպե տևողությամբ) ձայնային ազդանշան:

77.Բնակչության ազդարարելու մասին որոշումն ընդունում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հակաօդային պաշտպանության և ավիացիայի միացյալ հրամանատարական կետից ստացված տեղեկատվության հիման վրա:

78.<<Օդային տագնապի ավարտ>> ազդանշանի դեպքում իրականացվում է հետևյալ միջոցառումները՝

1) ստուգվում և վերականգնում է կառավարման, կապի և ազդարարման համակարգերը.

2) ճշգրտվում և պատրաստականության են բերվում պահպանված քաղաքացիական պաշտպանության կազմավորումները: Կազմակերպության քաղաքացիական պաշտպանության ուժերի եւ միջոցների հաշվարկը ներկայացված են հավելված N 6 -ում:

3) կազմակերպվում և անցկացվում են փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ:

4) կազմակերպվում և անցկացվում է տուժածների բժշկական օգնություն.

ԳԼՈՒԽ V.
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

79.Հայաստանի Հանրապետության վարչապետը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական պաշտպանության պետը և ղեկավարում է քաղաքացիական պաշտպանության ողջ գործընթացը:

80.Քաղաքացիական պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված մարմնի՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական պաշտպանության պետի տեղակալ:

81.Հայաստանի Հանրապետության նախարարները (գերատեսչությունների ղեկավարները), մարզպետները (Երևանի քաղաքապետը), համայնքների և կազմակերպությունների ղեկավարները համապատասխանաբար հանդիսանում են նախարարությունների (գերատեսչությունների), մարզերի (Երևան քաղաքի), համայնքների և կազմակերպությունների քաղաքացիական պաշտպանության պետեր և կառավարում են իրենց ոլորտի քաղաքացիական պաշտպանության գործընթացը:

82.Լիազորված մարմնի տարածքային ստորաբաժանումների ղեկավարները հանդիսանում են մարզերի (Երևան քաղաքի) քաղաքացիական պաշտպանության պետերի տեղակալներ:

83.Քաղաքացիական պաշտպանության պետերը իրենց իրավասության սահմաններում՝

1) պատասխանատվություն են կրում քաղաքացիական պաշտպանության պատրաստականության համար.

2) կազմակերպում և ղեկավարում են քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացումը.

3) հաստատում և գործողության մեջ են դնում քաղաքացիական պաշտպանության պլանները.

4) արձակում են քաղաքացիական պաշտպանությանը վերաբերվող որոշումներ, հրամաններ, հրահանգներ.

5) վերահսկում են քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կատարումը.

6) իրականացնում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:

84.Կազմակերպություններում քաղաքացիական պաշտպանության միջոցառումները իրականացնում են քաղաքացիական պաշտպանության կազմավորումները:

85.Քաղաքացիական պաշտպանության հարցերով կազմակերպությունների գործունեությունը համակարգում է ՀՀ ԱԻՆ ՓԾ մարզային փրկարարական վարչությունը :

Կազմակերպության ՔՊ շտաբի պետ _____Ա.Պապիկյան

Ց Ա Ն Կ

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ

1.Հիմնական ցուցանիշներ կազմակերպության քաղաքացիական պաշտպանության վիճակի

2.Սխեմա կազմակերպության քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմի կառավարման, կապի և ազդարարման

3.Հաշվարկ կազմակերպության անձակազմի անհատական պաշտպանության միջոցներով ապահովման

4. Հաշվարկ կազմակերպության անձնակազմի պատսպարման

5. Հաշվարկ կազմակերպության անձնակազմի տարահանման

6. Հաշվարկ կազմակերպության քաղաքացիական պաշտպանության ուժերի և միջոցների

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» հունվարի 2023 թվականի № 90-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի ,41-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, << Քաղաքացիական պաշտպանության մասին>> օրենքի 14-րդ հոդվածի <<գ>> կետի դրույթներով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2004 թվականի ապրիլի 22-ի <<Քաղաքացիական պաշտպանության պլանների մշակման կարգը սահմանելու մասին >> N633-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ, 5-րդ կետերի <<ե>> և 6-րդ կետի <<ը>> ենթակետերի՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի քաղաքացիական պաշտպանության 2023 թվականի պլանը համաձայն հավելվածի:

2.Հանձնարարել՝
Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքացիական պաշտպանության հարցերով պատասխանատու՝Գևորգ Հովհաննիսյանին.
1)Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի քաղաքացիական պաշտպանության 2023 թվականի պլանի մեկ օրինակը տրամադրել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարարական ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչությանը
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Недействительная подпись

ԱՐԹՈՒՐ ՊԱՊԻԿՅԱՆ

ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա. ՊԱՊԻԿՅԱՆ**

Հաստատում եմ՝
Գյումրի համայնքի ղեկավարին՝
փոխարինող՝ Ա.Պապիկյան
<< >> ——————— 2023թ.

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Գյումրիի համայնքի ղեկավարի 2023թ
——————— որոշման

ԳԼՈՒԽ I.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ԲԱԺԻՆ 1.

Պլանի սահմանումը և պլանի նպատակը

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի քաղաքացիական պաշտպանության պլանը՝ Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից պատերազմ հայտարարվելու դեպքում Մարզի պետական տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների խնդիրները, գործառույթներն ու դրանց իրականացման կարգը կանոնակարգող փաստաթղթերի փաթեթ է՝ ուղղված բնակչության և նյութական արժեքների պաշտպանությանը:

2. Պլանը սահմանում է քաղաքի քաղաքացիական պաշտպանության համակարգը ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրման, ռազմական դրության ժամանակ գործունեության, աշխատողների պաշտպանության կազմակերպման, բնագավառի գործունեության կայունության ապահովման, փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացման, համակարգի կառավարման, ինչպես նաև ռազմական դրության ժամանակ քաղաքի վրա դրված այլ խնդիրների կատարման կարգը, ծավալներն, ուժերն ու միջոցները:

ԲԱԺԻՆ 2.

Պլանում ներգրավվող մարմինները և նրանց գործառույթները

3. Պլանում ներգրավված են՝
1) համայնքի տարահանման հանձնաժողով.
2) համայնքապետարանի աշխատակազմ.
3) համայնքային քաղաքացիական պաշտպանության ծառայություններ
4) համայնքի քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ:

4. Պլանում ներգրավված մարմինների գործառույթները

1) Հայաստանի Հանրապետության Գյումրիի համայնքի, որպես տեղական ինքնակառավարման մարմինի գործառույթներն են՝

ա) կազմակերպել և իրականացնել համայնքում քաղաքացիական պաշտպանությունը.

բ) իրականացնել միջոցառումներ՝ համայնքային ենթակայության օբյեկտների անվտանգ աշխատանքն ապահովելու նպատակով.

գ) կազմակերպել քաղաքի քաղաքացիական պաշտպանության միջոցառումների պլանավորումը և իրականացումը.

դ) իրականացնել քաղաքի բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանումը, բնակչության պատսպարումը և անհատական պաշտպանության միջոցներով ապահովումը.

ե) ստեղծել քաղաքի քաղաքացիական պաշտպանության ծառայություններ.

զ) իրականացնել քաղաքի բնակչության ազդարարումը.

է) ստեղծել քաղաքացիական պաշտպանության կազմակերպման համար անհրաժեշտ ուժեր և ապահովել այդ ուժերի պատրաստականությունը:

2) Քաղաքի տարահանման հանձնաժողովի գործառույթներն են՝

ա) իրականացնել հսկողություն տարահանված բնակչության ընդունման հավաքակետերի և տեղաբաշխման վայրերի ծավալման նախապատրաստման աշխատանքների նկատմամբ.

բ) կազմակերպել և իրականացնել տարահանված բնակչության ընդունման և տեղաբաշխման միջոցառումներ.

գ) կազմակերպել տարահանված բնակչությանը տեղաբաշխելու համար նախատեսված տրանսպորտային միջոցների հատկացման աշխատանքներ.

2)համայնքային ՔՊ ծառայությունների գործառույթներն են՝

Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների պետերը՝ քաղաքացիական պաշտպանության համապատասխան պետին ներկայացնում են առաջարկություններ քաղաքացիական պաշտպանության կազմավորումների ստեղծման, կառուցվածքի, քանակի, համալրման և հագեցման վերաբերյալ: Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների ընդհանուր գործառույթներն են՝

ա) քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ապահովման պլանավորումը և իրականացումը քաղաքացիական պաշտպանության համակարգի համապատասխան պատրաստության աստիճանների բերման ժամանակ.

բ) քաղաքացիական պաշտպանության ծառայությունների կազմավորումների ստեղծումը, դրանց ապահովումն անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով, պատրաստումը և պահպանումը մշտական պատրաստականության վիճակում.

գ) ստեղծված իրադրության մասին իրական տեղեկատվության ստացման, վերլուծման և գնահատման կազմակերպումն ու քաղաքացիական պաշտպանության համապատասխան պետին փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը:

3) Ըստ նշանակության՝ համայնքային քաղաքացիական պաշտպանության ծառայությունների խնդիրներն են.

ա) կապի և ազդարարման ծառայության գծով՝ կառավարման մարմինների և բնակչության ազդարարումը, ռազմական դրության ժամանակ կառավարման մարմինների՝ կապով ապահովումը.

բ) ինժեներական ծառայության գծով՝

պաշտպանական կառույցների շինարարության պլանավորումը, կազմակերպումը և պատսպարվող բնակչության ընդունման համար այդ կառույցները պատրաստ վիճակում պահելը,

պաշտպանական կառույցների և բնակչության պատսպարման համար նախատեսված այլ տարածքների նախապատրաստման, վերանորոգման աշխատանքների պլանավորումը և դրանց շահագործման նկատմամբ հսկողության սահմանումը,

պաշտպանական կառույցներին բնակչության ամրագրումը,

փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների ինժեներական ապահովումը.

գ) բժշկական ծառայության գծով՝ հակառակորդի հարձակման վտանգի և հարձակման ժամանակ բնակչության բժշկական ապահովումն ու տուժած բնակչությանը բժշկական օգնություն ցույց տալը.

դ) տրանսպորտային ծառայության գծով՝ բնակչության տարահանման, հիվանդների և տուժածների փոխադրման ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների համար նրանց փոխադրումների՝ տրանսպորտային միջոցներով ապահովումը.

ե) առնտրի և սննդի ծառայության գծով

տուժած բնակչության, փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներում ընդգրկված կազմավորումների անձնակազմի՝ սննդամթերքով ու առաջին անհրաժեշտության այլ ապրանքներով և միջոցներով ապահովումը,

նյութական արժեքների պաշարների պահպանումը.

զ) էներգետիկայի և լուսաքողարկման ծառայության գծով՝

էներգամատակարարման համակարգի գործունեության կայունության միջոցառումների պլանավորումն ու իրականացումը,

էլեկտրամատակարարման ցանցերում անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպումը,

լուսաքողարկման միջոցառումների պլանավորումը, կազմակերպումը և կատարման նկատմամբ հսկողության սահմանումը.

է) բույսերի և կենդանիների պաշտպանության ծառայության գծով՝

գյուղատնտեսական կենդանիների և բույսերի, անասնաբուծական ու բուսաբուծական արտադրանքի, գյուղատնտեսական նպատակների համար օգտագործվող ջրային աղբյուրների և ոռոգման նպատակով օգտագործվող ջրամատակարարման ցանցերի պաշտպանության միջոցառումների կազմակերպումն ու իրականացումը,

վտանգավոր տարածքներից գյուղատնտեսական կենդանիների, գյուղատնտեսական արտադրանքի պաշարների դուրսբերման աշխատանքների կազմակերպումը.

ը) հասարակական կարգի պահպանման ծառայության գծով՝

ռազմական դրության ժամանակ քաղաքներում և այլ բնակավայրերում, կազմակերպություններում, տարահանման հավաքակայաններում ու տրանսպորտային մայրուղիներում հասարակական կարգի պահպանման ապահովումը, գույքի պահպանումը, ինչպես նաև տարահանված բնակավայրերում և օբյեկտներում մնացած գույքի պահպանության իրականացումը,

ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովումը.

թ) նյութատեխնիկական մատակարարման ծառայության գծով՝ փրկարարական ու անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ իրականացնող կազմավորումների՝ նյութատեխնիկական անհաժեշտ միջոցներով ապահովումը.

ժ) կոմունալ-տեխնիկական ծառայության գծով՝ ջրամատակարարման և կոյուղու ցանցերի կայունության բարձրացման միջոցառումների պլանավորումն ու իրականացումը, ինչպես նաև ջրամատակարարման և կոյուղու ցանցերում անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպումը.

ժա) բնակչության հատուկ սպասարկումների ծառայության գծով՝ բնակչության շրջանում անվերադարձ կորուստների հաշվառման, դիակների հուղարկավորման աշխատանքների կատարումը:

4) Քաղաքացիական պաշտպանության կազմավորումների գործառույթներն են՝

ա) համագործակցում են քաղաքացիական պաշտպանության միջոցառումներում ընդգրկված կառավարման մարմինների, կազմակերպությունների, այլ ուժերի հետ և կազմավորումները գործունեությունն իրականացնում են միանձնյա ղեկավարման սկզբունքով.

բ) կազմավորումները պատրաստականության են բերվում տվյալ կազմակերպության ղեկավարի կողմից՝ քաղաքացիական պաշտպանության համակարգը «Բարձր» և «Լրիվ» պատրաստության բերելու դեպքում.

գ) կազմավորումների անձնակազմերի ազդարարումն ու հավաքն իրականացվում են համապատասխան քաղաքացիական պաշտպանության պետի կողմից հաստատված ազդարարման և հավաքի սխեմաների համաձայն.

դ)փրկարարական աշխատանքների ընթացքում կազմավորումների հրամանատարները համագործակցում են քաղաքացիական պաշտպանության զորքերի եւ այդ աշխատանքներում ընդգրկված այլ ուժերի եւ ստորաբաժանումների հետ:

ԲԱԺԻՆ 3.
Պլանի իրավական հիմքերը

5. Պլանի իրավական հիմքերն են՝ Հայաստանի Հանրապետության օրենքները, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումները և այլ իրավական ակտեր՝

1) «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքը,
2) «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքը,
3) «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենքը,
4) «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքը,
5) Հայաստանի Հանրապետության կառավարության 2004թ. ապրիլի 22-ի «Քաղաքացիական պաշտպանության պլանների մշակման կարգը սահմանելու մասին» 633-Ն որոշումը,
6) Հայաստանի Հանրապետության կառավարության 2000թ. հոկտեմբերի 25-ի «Բնակչությանն անհատական պաշտպանության միջոցներով ապահովելու կարգը հաստատելու մասին» N679 որոշումը,
7) Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. օգոստոսի 18-ի «Վտանգավոր տարածքներից բնակչության տարահանման կարգը հաստատելու մասին» N 1180 որոշումը,
8) Հայաստանի Հանրապետության կառավարության 2000թ. սեպտեմբերի 28-ի «Բնակչության պատսպարման կարգը հաստատելու մասին» N 592 որոշումը,
9) Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թ. ապրիլի 10-ի «Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների ստեղծման, նախապատրաստման և գործունեության կարգը սահմանելու մասին» N 384-Ն որոշումը,
10) Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թ. նոյեմբերի 11-ի «Քաղաքացիական պաշտպանության կազմավորումների ստեղծման, նախապատրաստման և գործունեության կարգը սահմանելու մասին» N 1532-Ն որոշումը,
11) «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման կարգն ու ծրագիրը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 30.01.2003թ-ի թիվ 134-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 22.01.2015թ. թիվ 46-Ն որոշումը,
12) Հայաստանի Հանրապետության կառավարության 2004թ. հուլիսի 29-ի «Ճառագայթային, քիմիական և մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգի ստեղծման և գործունեության ապահովման կարգը սահմանելու մասին» N 1064-Ն որոշումը,
13) Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 22-ի «Հայկական ատոմային էլեկտրակայանի միջուկային և (կամ) ճառագայթային վթարների դեպքում բնակչության պաշտպանության ազգային պլանը (Հայկական ատոմային էլեկտրակայանի արտաքին վթարային պլան) հաստատելու մասին» N 2328-Ն որոշումը,
14) Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. հունիսի 24-ի «Տարահանված բնակչության տեղաբաշխման վայրերում կենսապահովման կարգը հաստատելու մասին» N 824-Ն որոշումը:

ԳԼՈՒԽ II.
ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ՀԱՐԶԱԿՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ
ԲԱԺԻՆ 1.

6. Քաղաքը զբաղեցնում է մարզի տարածքի հյուսիս- արևմտյան մասը:

7. Քաղաքի տարածքը կազմում է 4444 հա, քաղաքի բնակչության թիվը կազմում է 156185մարդ: Քաղաքի բնակչության թվաքանակը ըստ տարիքի և սեռի՝

1) մինչեւ 1 տարեկան – 1314
2) 1-9 տարեկան – 1250
3) 9-17 տարեկան – 14001
4) 17 եւ բարձր – 127039
5) աշխատունակ տարիքի – 99139
6) 17-ից բարձր տղամարդ – 74308
7) 17-ից բարձր կին - 49620

8. Քաղաքում գերակշռում են տափաստանային լանդշաֆտների լեռնային տարբերակները: Քաղաքում կլիմայական պայմանները փոփոխվում են ըստ բարձրության և արտահայտվում են բարեխառն՝ երկարատև տաք ամառներով ու ցուրտ ձմեռներով: Քաղաքի կլիման, թեև ընդհանուր առմամբ բարեխառն է, բայց աչքի է ընկնում ցամաքայնությամբ և ըստ բաձրության դառնում է ավելի խիստ: Համայնքում տարեկան տեղումների քանակը կազմում է 590 մմ:

9. Քաղաքի տարածքի քամիների ուղղության և անդորրի տարեկան կրկնելիությունը (%) ըստ գոտիների և ամիսների (տարվա եղանակների) ներկայացված է հավելված N 1-ում:
Քաղաքի տարածքում գտնվում է «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերության « Գյումրու» կայարանը, Երևան-Գյումրի-Այրում երկաթգիծը 8կմ երկարությամբ: Համայնքի տարածքով է անցնում 1) Երևան-Գյումրի-Վրաստանի սահման 12կմ և 2) Մ-3 Սպիտակ-Գյումրի-Թուրքիայի սահման 6կմ երկարությամբ միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհները:

10. Քաղաքում առկա է թվով 12 կամուրջներ: Համայնքի ջրամատակարարումն իրականացվում է «Հայջրմուղկոյուղի» գյումրու մասնաճյուղի Ղազանչի I,II-350լ/վրկ, Ղազանչի I-175լ/վրկ, Կրասար-160լ/վրկ, Զույգաղբյուր-285լ/վրկ ջրաղբյուրներից, ջրամատակարարաման խողովակների ընդհանուր երկարությունը կազմում է 90400մ: Քաղաքի գազամատակարարումն իրականացվում է համայնքի տարածքում առկա գազի 452900մ երկարությամբ խողովակաշարերով:

11. Համայնքի էլեկտրամատակարարման գծերի ընդհանուր երկարությունը կազմում է 135000մ.: Համայնքի գյուղատնտեսական կենդանիների և թռչունների գլխաքանակի վերաբերյալ տեղեկությունները հետևյալն են՝

1) խոշոր եղջերավոր – 3374 գլուխ
2) մանր եղջերավոր – 2884 գլուխ
3) բանող անասուններ – 5 գլուխ
4) խոզեր – 1875 գլուխ
5) թռչուններ - 16300 թև

ԲԱԺԻՆ 2.
ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՎԱՆԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ՝ ԶԵՆՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԵՎ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ԴԻՎԵՐՍԻՈՆ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ

12. Հավանական հակառակորդի զինված ուժերի ավիացիայի, հրթիռահրետանային և դիվերսիոն հետախուզական խմբերի ազդեցության թիրախ քաղաքում հնարավոր է հանդիսանան՝

1) քաղաքապետարանի վարչական շենքը.
2) ջրամատակարարման աղբյուրները.
3) ֆիքսված և բջջային հեռախոսակապի հանգույցներն ու ապահովող սարքավորումները.
4) քաղաքի տարածքում գտնվող հեռուստաաշտարակները.
5) ավտոմոբիլային և երկաթուղային ճանապարհները ու ճանապարհային կառույցները.
6) բնակելի (շենքերը և տները) ֆոնդի տարածքները:

ԲԱԺԻՆ 3.
ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍՏԵՂԾՎՈՂ ՀՆԱՐԱՎՈՐ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

13. Հակառակորդի գործողությունների արդյունքում քաղաքի տարածքում հնարավոր է առաջանա հետևյալ իրավիճակը՝

Զենքերի կիրառման դեպքում շենքերը և շինությունները կարող են կրել տարբեր աստիճանների վնասվածքներ, որոնք բաժանվում են՝ լրիվ, ուժեղ, միջին ու թույլ.

14. Լրիվ վնասվծության դեպքում փլատակներում հիմնականում շենքերի, շինությունների կրող կոնստրուկցիաների, սարքավորումների, կահույքի մասեր են: Կարող են քանդվել նաև պաշտպանական կառույցների ծածկերը, մուտքի պաշտպանիչ դռները, շարքից կարող են դուրս գալ ներսի բոլոր սարքավորումները, հնարավոր է, որ բոլոր պատսպարվածները զոհվեն: Լրիվ վնասվծության դեպքում շարքից կարող են դուրս գալ նաև գազատարև ջրատար խողովակները: Կամուրջների լրիվ վնասվածության դեպքում, կամուրջների թռիչքները դեֆորմացվում են և երթեւեկեությունը կամուրջներով կարող է վերականգնվել հենարանների թռիչքների ուժեղացման աշխատանքներից հետո:

15. Միջին և թույլ վնասվածության դեպքում հիմնականում վնասվում են շենքերի և շինությունների կտուրները, իսկ հիմնական կոնստրուկցիաները պահպանվում են:

1) բնակչության շրջանում տուժածները կկազմեն.
ա) անվերադարձ (1%) - 1470 մարդ ,
բ) սանիտարական (3%)- 4410 մարդ

16. Քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպման եւ անցկացման վրա ազդող առանձնահատկությունները՝

ա)Քաղաքի ընդհանուր օգտագործման տեղական նշանակության ավտոճանապարհների ինժեներական կառույցների վնասման պարագայում անհնար կդառնա տարահանումը և փրկարարական ուժերի առաջանցումը դեպի վնասված գոտիներ.

բ) դիվերսիոն գործողությունների հետևանքով կարող է աղտոտվել քաղաքի ջրամատակարարման օրվա կարգավորման ջրամբարները, բաց աղբյուրները, ինչպես նաև կապտաժները.

գ) կընդհատվի ֆիքսված և բջջային հեռախոսակապն ամբողջովին.

դ)հեռուստաաշտարակների վնասման դեպքում կընդհատվի կենտրոնական հեռարձակման ալիքների հաղորդումները, տեղական հեռուստաալիքների վնասման դեպքում տեղական հեռարձակումը.

ե) կընդհատվի փոստային հաղորդակցությունը.

II ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԽԱՂԱՂ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՑ ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵԺԻՄԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

3.1. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԽԱՂԱՂ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՑ ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵԺԻՄԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

17. «Ամենօրյա» պատրաստականության աշխատակարգի ժամանակ իրականացվող միջոցառումները.

1) Հայաստանի Հանրապետության ՀՀ Շիրակի մարզի պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններն ու կազմակերպությունները <<Մշտական>> պատրաստականության աշխատակարգում զբաղվելով իրենց ամենօրյա աշխատանքային գործունեությամբ, պետք է պատրաստ լինեն քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացմանը: Համայնքի քաղաքացիական պաշտպանության վիճակի վերաբերյալ հիմնական ցուցանիշները ներկայացված են աղյուսակ N 2- ում: Մարզի համայնքները, կազմակերպությունները, Շիրակի մարզային փրկարարական վարչությունը քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացմանը պատրաստ լինելու համար, անհրաժեշտ է որ, քաղաքացիական պաշտպանության ուղղությամբ իրենց իրավասության սահմաններում իրականացնեն քաղաքացիական պաշտպանության նախապատրաստական միջոցառումները.

ա) մարզի համայնքներում, կազմակերպություններում, քաղաքացիական պաշտպանության ծառայություններում ստեղծեն քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ՝ փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացման նպատակով.

բ) շինարարական կազմակերպությունները ապահովեն շենքերի, շինությունների, ինժեներական ցանցերի, հիդրոտեխնիկական կառույցների, տրանսպորտային հաղորդակցության ուղիների եւ մայր ուղիների շինարարության անվտանգությունն ու հուսալիությունը.

գ) հիմնել կառավարման, կապի եւ ազդարարման համակարգեր եւ ապահովել դրանց բնականոն գործունեությունը.

դ) իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների պատրաստումը եւ բնակչության ուսուցումը.

ե) իրականացնել պաշտպանական կառույցների հաշվառումը եւ պահպանումը.

զ) կուտակել անհատական պաշտպանության միջոցների եւ քաղաքացիական պաշտպանության նպատակով այլ գույքի անհրաժեշտ պաշարներ.

է) մշակել համայնքի քաղաքացիական պաշտպանության քաղաքացիական պաշտպանության պլան:

18. <<Բարձր>> պատրաստականության աշխատակարգի ժամանակ իրականացվող միջոցառումները.

1) Հայաստանի Հանրապետության զինված ուժերը <<Բարձր>> պատրաստականության աստիճանի փոխադրվելու ժամանակ, Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններն ու կազմակերպությունները անցկացնում են <<Բարձր>> պատրաստականության աշխատակարգի միջոցառումներ՝ ուղղված բնակչության պաշտպանությանը, քաղաքացիական պաշտպանության ուժերի պատրաստությանը, ինչպես նաև հատուկ, կարևորագույն նշանակության օբյեկտների գործունեության կայունության բարձրացմանը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական պաշտպանության համակարգը փոխադրվում է <<Լրիվ>> պատրաստականության աշխատակարգի Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ռազմական դրություն հայտարարվելու դեպքում:

2) Եթե մինչև Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարվելը քաղաքացիական պաշտպանության <<Բարձր>> պատրաստականության աշխատակարգի միջոցառումները չեն իրականացվել, կամ իրականացվել են ոչ բոլոր միջոցառումները, ապա դրանք իրականացվում են Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարվելուց հետո հնարավորինս սեղմ ժամկետներում:

3) Քաղաքացիական պաշտպանության համակարգի <<Լրիվ>> պատրաստականության աշխատանքային ռեժիմի դեպքում համայնքի քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմը իրենց լիազորությունների սահմանում գործողության մեջ են դնում քաղաքացիական պաշտպանության պլանը, կազմակերպում եւ անցկացնում է այդ պլանով նախատեսված միջոցառումները բացի տարահանումից, որն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, իսկ հակառակորդի հանկարծակի հարձակման դեպքում՝ պետական կառավարման տարածքային, տեղական ինքնակառավարման մարմինների և տվյալ տարածքի զինվորական կայազորի կողմից՝ իրենց իրավասությունների սահմաններում:

4) Քաղաքացիական պաշտպանության համակարգի ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրելու միջոցառումներն անցկացվում են քողարկված՝ ուսումնավարժությունների և վարժանքների անցկացման պատրվակով:

5) Քաղաքացիական պաշտպանության համակարգի ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրելու վերաբերյալ ազդանշանների հաղորդումն իրականացվում է՝

ա) տեղական ինքնակառավարման մարմիններին և կազմակերպություններին՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության դիսպետչերական կետի միջոցով:

6) Համայնքի քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմի և քաղաքացիական պաշտպանության կազմավորումների ստուգումը՝ պատրաստականության աշխատանքային ռեժիմների բերմամբ, իրականացվում է համայնքի քաղաքացիական պաշտպանության պետի որոշմամբ, որտեղ նշվում են ստուգման ծավալները և ժամկետները, ստուգում իրականացնող լիազորված անձը:

7) Հայաստանի Հանրապետության համայնքի քաղաքացիական պաշտպանության համակարգի պատրաստականության փոխադրման միջոցառումներն իրականացվում են մարզի տարածքային զինվորական կայազորի պետի հետ համաձայնեցված:

3.2 ԿԱՊԻ ԵՎ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

18. Հայաստանի Հանրապետության համայնքի քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմի, տարահանման հանձնաժողովի, ռազմական դրության պայմաններում գործունեությունը շարունակող կազմակերպությունների, քաղաքացիական պաշտպանության ծառայությունների և կազմավորումների ղեկավարների, զինվորական կայազորի պետի ազդարարման և նրանց հետ կապի ապահովման կարգը ներկայացված է համայնքի քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմի կառավարման, կապի եւ ազդարարման սխեմայում՝ աղյուսակ N 3:

19. Համայնքում քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման ժամանակ կապը մարզի համայնքների, քաղաքացիական պաշտպանության ծառայությունների, կարևորագույն նշանակության օբյեկտների, քաղաքացիական պաշտպանության պետերի հետ կազմակերպելու համար օգտագործվում է բջջային և ֆաքսիմիլային կապերը:

3.3. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

20. Քաղաքացիական պաշտպանության հետախուզությունը իրականացվում է համայնքի ամբողջ տարածքում:

21. Հետախուզության նպատակն է իրադրության վերաբերյալ անհրաժեշտ տվյալների ձեռքբերում՝ որոշումներ ընդունելու համար՝ ուղղված բնակչության և քաղաքացիական պաշտպանության ուժերի անձնակազմի պաշտպանությանը, ինչպես նաև փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացմանը:

22. Հետախուզության առարկա են հանդիսանում՝

1) համայնքի վարչական տարածքները.

2) լրիվ և ուժեղ ավերածությունների ու աղետալի ջրածածկման գոտում հայտնված համայնքի տարածքները.

3) հրդեհների օջախները.

4) բնակչության տարահանման և քաղաքացիական պաշտպանության ուժերի առաջանցման երթուղիները.

5) գազամատակարարման, էլեկտրամատակարարման, ջրամատակարարման և կոյուղու ցանցերի վթարների օջախները.

6) պաշտպանական կառույցները և մարդկանց այլ հավաքատեղիները, շրջակա միջավայրի օբյեկտները:

ա.Հակառակորդի հարձակման սպառնալիքի դեպքում հետախուզության հիմնական խնդիրներն են՝

- շրջակա միջավայրի վարակվածության նկատմամբ անընդհատ դիտարկում և լաբորատոր հսկողության իրականացում.
- սանիտարահամաճարակային վիճակի ճշգրտում՝ քաղաքացիական պաշտպանության համահավաք ուժերի նախապես ընտրված տեղակայման և առաջիկա գործողությունների վայրերում, ինչպես նաև տարահանվող բնակչության տեղաբաշխման վայրերում.
- քաղաքացիական պաշտպանության ուժերի դեպի խոցման օջախներ մուտքի, ինչպես նաև տարահանման երթուղիների վիճակի ճշգրտում.
- Հակառակորդի հարձակումից հետո հետախուզության հիմնական խնդիրներն են՝

7) կիրառված զենքերի տեսակների, հարվածի ենթարկված տարածքների և օբյեկտների բացահայտում.

8) ռադիոակտիվ և թունավոր նյութերի, մանրէաբանական միջոցների և վարակված տարածքների սահմանների հայտնաբերում.

9) քաղաքացիական պաշտպանության ուժերի տեղակայման վայրերում և դեպի խոցման օջախներ մուտքի երթուղիներում իրադրության ճշգրտում.

10) հիդրոտեխնիկական կառույցների փլվածքների բնույթի և աղետալի ջրածածկման գոտիների որոշում.

11) ինժեներական կառույցների, կոմունալ-էներգետիկ ցանցի, կապի գծերի, երկաթգծերի, ավտոմայրուղիների վիճակի ճշգրտում.

12) փրկարարական աշխատանքներ իրականացվող օբյեկտներում և բնակչության տեղաբաշխման վայրերում ռադիացիոն, քիմիական և մանրէաբանական վարակվածության վիճակի որոշում.

13) վտանգավոր օբյեկտների փլվածքների բնույթի, պաշտպանական կառույցների տեղերի, մոտեցման ուղիների ճշգրտում, դրանցում առկա մարդկանց վիճակի և օգնության ցուցաբերման ձևերի որոշում.

14) փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացման ողջ ընթացքում իրադրության փոփոխության անընդհատ հսկողության իրականացում.

15) հրդեհների տարածքների հայտնաբերում և հրդեհների տարածման ուղղությունների որոշում:

Հետախուզական տվյալները զեկուցում են կապի միջոցներով, ինչպես նաև նախապես մշակված զեկույցների հաշվետախտակի համաձայն: Հետախուզության այն տվյալները, որոնք պահանջում են շտապ որոշման ընդունում, զեկուցվում են անմիջապես:

3.4. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

3.4.1 ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

23. Անհատական պաշտպանության միջոցները նախատեսված են պաշտպանելու մարդու օրգանիզմը, մաշկը և հանդերձանքը ռադիոակտիվ, ուժեղ ներգործող թունավոր նյութերից և մանրէաբանական միջոցներից:

24. Անհատական պաշտպանության միջոցները բաժանվում են 2 խմբի՝ շնչառական օրգանների պաշտպանության միջոցներ և մաշկի պաշտպանության միջոցներ:

25. Շնչառական օրգանների պաշտպանության միջոցներ են հանդիսանում զտող և մեկուսացնող հակագազերը, շնչադիմակները և հասարակ միջոցները՝ փոշի չթափանցող գործվածքային դիմակները և բամբակաթանզիֆային վիրակապերը:

26. Անհատական պաշտպանության միջոցներով ապահովման կարգի համաձայն, բնակչությունն անհատական պաշտպանության միջոցներով ապահովվում է հետևյալ հերթականությամբ.

1) առաջին հերթին՝

սահմանամերձ մինչեւ 10 կմ շառավիղով գոտու համայնքի բնակչությունը, փրկարար ուժերի անձնակազմը.

2) երկրորդ հերթին՝

մնացած բնակչությունը:

27. Համայնքի բնակչության անհատական պաշտպանության միջոցներով ապահովման հաշվարկը ներկայացված է աղյուսակ N 4-ում:

28. Անհատական պաշտպանության միջոցներով ապահովման հաշվարկի արդյունքում, համայնքի ՔՊ պետը հայտ է ներկայացվում Շիրակի մարզային փրկարարական վարչության պետին եւ նրա կողմից ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենին հայտ է ներկայացվում մարզի ՔՊ կազմավորումների եւ բնակչության համար անհրաժեշտ անհատական պաշտպանության միջոցների հատկացման համար, իսկ ՓԾ տնօրենի կարգադրությամբ դուրս են գրվում հայտագրեր, որոնցով ՇՄՓՎ պետը կազմակերպում է համապատասխան պահեստներից ԱՊՄ-ի ներկրումը ԱՊՄ բաշխման կետեր:

3.4.2. ՊԱՏՍՊԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

29. Բնակչության պատսպարումը պաշտպանական կառույցներում մարդկանց կյանքի և գործունեության ապահովման հիմնական միջոցն է: Բնակչության պատսպարումը ռազմական դրության և հակառակորդի հանկարծակի հարձակման կամ դրա անմիջական վտանգի առկայության դեպքում իրականացվում է <<Օդային տագնապ>> ազդարարման ազդանշանով:

30. Բնակչության պատսպարման համալիր միջոցառումներն ամրագրված են քաղաքացիական պաշտպանության նախապատրաստական և հիմնական միջոցառումների ցանկերում և ընդգրկում են՝

1) պաշտպանական կառույցների վաղօրոք շինարարություն.

2) պաշտպանական կառույցների պահպանումը պատրաստ վիճակում.

3) պաշտպանական կառույցների նպատակային օգտագործման կազմակերպում.

4) արագ կառուցվող ապաստարանների և հակաճառագայթային թաքստոցների շինարարության կազմակերպումն ու ապահովումը պատերազմի սպառնալիքի դեպքում:

Համայնքի բնակչության պատսպարումն իրականացվում է համայնքում առկա կազմակերպությունների եւ բնակելի ֆոնդի նկուղային հարկերում:

31. Համայնքի բնակչության պատսպարման իրականացումը ապահովելու նպատակով, նախապես կատարվել է համայնքի բնակչությանը պաշտպանական կառույցներին (նկուղներին) ամրագրման հաշվարկներ:

32. Պաշտպանական կառույցներով չապահովված բնակչությունը մասնակցում է պարզագույն թաքստոցների կառուցմանը, հետագայում դրանցում պատսպարվելու նպատակով:

33. Պաշտպանական կառույցները պատրաստականության են բերվում, պատսպարվողների ընդունման համար ազդանշան տալու պահից սկսաց 12 ժամվա ընթացքում:

34. Համայնքի բնակչության պատսպարման հաշվարկը ներկայացված է աղյուսակ N 5-ում:

3.4.3 ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

35. Տարահանումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից պատերազմ հայտարարելու, ինչպես նաև այնպիսի արտակարգ իրավիճակների առաջացման կամ անմիջական սպառնալիքի դեպքում, որի հետևանքով որոշակի տարածքներում (բնակավայրերում, օբյեկտներում) կարող են առաջանալ մարդկանց կյանքի և կենսագործունեության բնականոն պայմանների վրա բացասաբար ազդող գործոններ:

36. Համայնքի բնակչության տարահանման միջոցառումները իրականացվում են ՀՀ Շիրակի մարզի վտանգավոր տարածքներից բնակչության տարահանման պլանին համապատասխան:

37. Զենքի տեսակների կիրառման դեպքում տարահանման մասին որոշում ընդունում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, իսկ հակառակորդի հանկարծակի հարձակման դեպքում՝ պետական կառավարման տարածքային, տեղական ինքնակառավարման մարմինները և տվյալ տարածքի զինվորական կայազորի պետը՝ իր իրավասության սահմաններում:

38. Բնակչության տարահանումը, տարահանված բնակչության ընդունումը և տեղաբաշխումը իրականացնում են տեղական ինքնակառավարման մարմինները:

39. Տարահանման միջոցառումների կազմակերպման և իրականացման նպատակով համայնքում, համայնքի քաղաքացիական պաշտպանության պետի որոշմամբ ստեղծվել է համայնքային տարահանման-ընդունման հանձնաժողով: Հանձնաժողովի նախագահը ի պաշտոնե հանդիսանում է համայնքի ղեկավարի տեղակալը:

40. Ռազմական դրության ժամանակ, հակառակորդի հանկարծակի հարձակման, հակառակորդի հարձակման սպառնալիքի դեպքում սահմանամերձ, ինչպես նաև մարտական գործողությունների վարման և զենքի տեսակների անմիջական կիրառման բնակավայրերից և տարածքներից կատարվում է մասնակի տարահանում:

41. Տարահանված բնակչությանը ընդունելու համար ընդունող համայնքի դպրոցում նախատեսվում է տարահանված բնակչության ընդունման հավաքակայան:

42. Համայնքի բնակչության տարահանման հաշվարկը ներկայացված է աղյուսակ N 6-ում:

3.5. ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ՎԹԱՐԱՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՐԻ ԽՄԲԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

3.5.1. ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ՎԹԱՐԱՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

43. Հակառակորդի հարվածից հետո իրավիճակի գնահատմանն զուգընթաց իրականացվում է խափանված կառավարման համակարգի վերականգնում և փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպում:

44. Խոցման օջախներում փրկարարական աշխատանքները կանոնակարգելու նպատակով ստեղծվում են աշխատանքային տեղամասեր, որտեղ փրկարարական աշխատանքների անընդհատությունը ապահովելու նպատակով համայնքի քաղաքացիական պաշտպանության պետի որոշմամբ սահմանվում են աշխատանքային երկու և ավելի հերթափոխեր:

45. Բնակելի հատվածներում փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ իրականացնելիս հատուկ ուշադրություն է դարձվում փլված շինություններում տուժածների որոնմանը և բուժօգնության ցուցաբերմանը: Այս աշխատանքներին ներգավվում են ձեռքի գործիքներով և մեխանիզացիայով հագեցված ստորաբաժանումները:

46. Փրկարարական աշխատանքներին ներգրավվում է համայնքի փրկարարական կազմավորումը, որոնք հագեցված են ձեռքի գործիքներով:

47. Համայնքի ՔՊ կազմավորումները կարող են համալրվել համայնքի քաղաքացիներից՝ 16-65 տարիքի տղամարդկանցից եւ 16-55 տարեկան կանանցից, բացառությամբ այն կանանց որոնք ընտանիքի կազմում ունեն մինչեւ 16 տարեկան տարիքի երեխաներ:

48. Ճանապարհների անցանելիությունն ապահովվում է համայնքի ուժերով, անհնարինության դեպքում՝ տվյալ տարածաշրջանը սպասարկող ճանապարհաշինարարական կազմակերպությունների օժանդակությամբ:

49. Ճանապարհների երթևեկության վերականգնումից հետո իրականացնում են ճանապարհների մաքրում դեպի աշխատանքային տեղամասեր:

50. Փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացման հերթականությունը, ձևերը և կատարման կարգը կախված են փլվածքների բնույթից, վթարների տեսակից, երկրորդային վտանգ ներկայացնող գործոններից:

51. Հիմնականում տուժած տարածք ուժերի մուտք գործելու հերթականությունը հետևյալն է՝

1) ճանապարհների անցողականության ապահովման խմբերը և հետախուզությունը.

2) հիմնական ստորաբաժանումներ (հրշեջ-փրկարարական ջոկատները, փրկարարական վաշտերը).

3) բժշկական ստորաբաժանումները.

4) փրկարարական կազմավորումները.

5) հասարակական կարգի պահպանման և վթարատեխնիկական կազմավորումները:

52. Մանրէաբանական վարակվածության օջախներում հայտարարվում է <<կարանտին>>: Այս դեպքում փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքները կազմակերպվում է կարանտինի ռեժիմի պահանջներին խիստ համապատասխան:

53. Վերը նշված դեպքում փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներին ներգրավվում են միայն անհատական պաշտպանության միջոցներով ապահովված ստորաբաժանումները (կազմավորումները):

54. Աղետալի ջրածածկման գոտում փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներն իրականացնում են լողամիջոցներով հագեցված, ինչպես նաև ինժեներական տեխնիկա ունեցող կազմավորումները:

55. Գիշերային ժամերին ապահովվում է փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների աշխատանքային տեղամասերի և երթուղիների լուսավորումը: Զուգահեռ կազմակերպում է պարեկային ծառայություն:

56. Նյութատեխնիկական, տեխնիկական սպասարկման, սննդի և խմելու ջրի մատակարարման կազմավորումները ծավալվում են աշխատանքային տեղամասերին մոտ և ուժերի ժամանակավոր տեղակայման վայրերում:

57. Վարակիչ հիվանդությունների առաջացումը և տարածումը կանխելու նպատակով իրականացվում է մահացածների հուղարկավորման, վարակված, փչացած սննդամթերքի և սատկած գյուղատնտեսական կենդանիների ոչնչացման միջոցառումներ:

3.5.2. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՐԻ ԽՄԲԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

58. ՈՒԺերի խմբավորումը համայնքում առկա քաղաքացիական պաշտպանության կազմավորումների մի մասն է, նախատեսված կոնկրետ վայրում (շրջանում, ուղղությունում) փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ կազմակերպելու և իրականացնելու համար:

59. ՈՒԺերի խմբավորման կազմը, քանակը և հագեցվածությունը որոշվում է համայնքի քաղաքացիական պաշտպանության պետի հրամանով:

60. Փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու, անընդհատությունը ապահովելու, հանկարծակի առաջացած լրացուցիչ խնդիրների լուծման համար հայտ է ներկայացվում մարզի ՔՊ պետին անհրաժեշտ տեխնիկայով ապահովելու համար:

3.6.ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

3.6.1. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

61. Համայնքում քաղաքացիական պաշտպանության հասարակական կարգը ապահովում է համայնքի հասարակական կարգի պահպանման խումբը:

62. Հասարակական կարգի պահպանման ուժեղացմանն ուղղված կատարվում են հետևյալ միջոցառումները՝

1) հասարակական կարգի պահպանման միջոցառումներն իրականացվում են պահակակետերում, հսկիչ-անցագրային կետերում, երթուղիներում, մարդաշատ ու զանգվածային միջոցառումների անցկացման վայրերում.

2) ծառայության կազմակերպման համար մշակվում է միասնական տեղադիր, հաշվարկվում են ուժերն ու միջոցները, մշակվում ծառայությունների համագործակցության պլան.

3) հասարարակական կարգի պահպանությունն կարող է ուժեղացվել մարզային ոստիկանության ուժերի և միջոցների հաշվին.

63. Ռազմական դրության պայմաններում բնակչության տարահանման և տնտեսական փոխադրումների ընթացքում ճանապարհային երթևեկության կարգավորման կարգը հետևյալն է՝

1) ռազմական դրության պայմաններում ավտոճանապարհներին տրանսպորտային միջոցների և հետիոտների երթևեկության կարգը, ինչպես նաև երթևեկության մասնակիցների փոխադարձ պարտավորությունները կարգավորվում (որոշվում) են ճանապարհային երթևեկության կանոններով.

2) ավտոճանապարհներին (բացի ռազմական նշանակության) երթևեկության կազմակերպման և կարգավորման պատասխանատվությունը դրվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության վրա.

4) ռազմական նշանակության ավտոճանապարհներին երթևեկության կազմակերպումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից անհրաժեշտության դեպքում ընդգրկելով նաև Շիրակի մարզային ոստիկանության ուժերն ու միջոցները.

5) ռազմական նշանակության ճանապարհներին, մինչև Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ճանապարհապարեկային ծառայության ուժերի ծավալումը, երթևեկությունը կարգավորվում է մարզային ոստիկանության ճանապարհային ոստիկանության ծառայության և այլ ստորաբաժանումների ուժերով ու միջոցներով:

6) փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների, ինչպես նաև տարահանման ու տնտեսական փոխադրումների իրականացման ժամանակ, բնակավայրերում և դրանցից դուրս եկող ավտոճանապարհներով բոլոր տեսակի ավտոփոխադրումների (բացի զինվորականից) կազմակերպման և իրականացման պատասխանատվությունը դրվում է պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների վրա.

7) իրականացվող փոխադրումների պլանավորման և ապահովման ժամանակ սահմանվում է փոխադրումների հետևյալ հերթականությունը՝

ա. առաջին հերթին՝ բոլոր տեսակի զինվորական փոխադրումները.

բ. երկրորդ հերթին՝ մարդկանց տարահանում.

գ. երրորդ հերթին՝ բեռների փոխադրում.

8) ռազմական դրության պայմաններում ավտոճանապարհներին տրանսպորտային միջոցների երթևեկության հերթականությունն ապահովելու համար նախատեսվում են անցագրեր.

9) բնակչության տարահանման և տնտեսական փոխադրումների դեպքում ավտոճանապարհային երթևեկության կարգավորման կարգախմբերն իրենց ծառայությունը կատարում են հսկիչ-անցագրային երթևեկության կարգավորման կետերում.

10) հսկիչ-անցագրային կետերում ճանապարհային ոստիկանության ծառայողները իրենց ծառայությունը կազմակերպում են մարզի պարեկային ծառայության հետ համատեղ:

Նրանց հիմնական խնդիրներն են՝

ա. ճանապարհներին տրանսպորտային միջոցների հետիոտների անվտանգ երթևեկության ապահովումը.

բ. տրանսպորտային միջոցների երթևեկության սահմանված կարգի պահպանումը.

գ. հասարակական կարգի պահպանմանը մասնակցությունը.

դ. հանցագործության և այլ իրավախախտումների նախազգուշացումն ու կանխումը.

ե. պետական ունեցվածքի պահպանումը.

զ. իրավիճակից բխող այլ խնդիրների կատարումը.

11) երթևեկության կարգավորման կետերը լինում են շարժական և անշարժ: Շարժական կարգավորման կետերում (ճանապարհի առանձին հատվածներ) ճանապարհային ոստիկանության ծառայողները նշանակվում են ճանապարհային երթևեկության խնդիրները լուծելու, տարահանման դեպքում՝ ռեժիմային միջոցառումներն իրականացնելու, տարահանման ու զորահավաքային վայրերում երթևեկության անվտանգությունն ապահովելու, ինչպես նաև օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով.

12) անշարժ կարգավորման կետերը տեղադրվում են խաղաղ և ռազմական դրության ժամանակաշրջանում սպասարկվող ճանապարհների առանձին հատվածներում (կետերում).

13) հսկիչ-անցագրային և կարգավորման կետերը ծավալվում են ճանապարհի այնպիսի տեղամասերում, որոնց շրջանցումն անհնար է, կամ այնպիսի տեղերում, որ հնարավոր լինի ավելի շատ երթևեկության մասնակիցների ընդգրկումը և վերահսկումը.

14) հսկիչ-անցագրային և կարգավորման կետերի ու դրանցում ընդգրկվող անձնակազմի անդամների թիվը որոշվում է խաղաղ ժամանակ.

64. Հասարակական կարգի պահպանության ծառայության ուժերի և միջոցների կազմը և բաշխումը իրականացվում է համաձայն ծառայության քաղաքացիական պաշտպանության պլանի:

3.6.2 ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

65. Քաղաքացիական պաշտպանության հակահրդեհային պաշտպանությունը կազմակերպչական և ինժեներատեխնիկական համալիր միջոցառումներ են, որոնք ուղղված են հրդեհների կանխմանը կամ տարածման արգելմանը, մարդկանց պաշտպանությանը հրդեհներից, բարձր ջերմաստիճանից և ուժեղ ծխապատված գոտիներից:

66. Համայնքում քաղաքացիական պաշտպանության հակահրդեհային անվտանգության ապահովման համար պատասխանատու է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության համապատասխան տարածքային ստորաբաժանումը:

67. Հակահրդեհային ապահովման մեջ ընդգրկվում են հրդեհային հետախուզությունը, հրդեհի մեկուսացումը և մարումը:

68. Համայնքի տարածքում զանգվածային հրդեհների առաջացման պայմաններում տեղի հրշեջ-փրկարարական ջոկատի ուժերը չեն կարող բավարար լինել, ուստի հրդեհաշիջմանը անհրաժեշտ է ընդգրկել նաև քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ, հասարակական ուժեր և բնակչությանը:

69. Երթուղիներում հրշեջ-փրկարարական ջոկատները, բացի հրդեհաշիջման աշխատանքներից, մասնակցում են նաև.

1) փլուզված տարածքներից մարդկանց փրկման աշխատանքներին.
2) ջրամբարների պատվարների փլուզումից առաջացած ջրածածկման գոտուց մարդկանց դուրս բերմանը.
3) Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող անտառների հրդեհաշիջմանը.
4) կամուրջների փլուզման ժամանակ գետանցումների իրականացման և փրկման աշխատանքներին.
5) փլուզված պաշտպանական կառույցներից մարդկանց դուրս բերմանը և առաջին բուժօգնության ցուցաբերմանը՝ օգտագործելով փոքր մեխանիզացիա և ինժեներական տեխնիկա, համագործակցելով ինժեներական և կոմունալ-տեխնիկական ծառայությունների հետ.

70. Համայնքի հակահրդեհային միջոցառումների ապահովումը իրականացվում է Շիրակի մարզային փրկարարական վարչության տարածքային հրշեջ փրկարարական ջոկատի ուժերով եւ միջոցներով:

71. Պատերազմական ժամանակաշրջանում հրդեհների մարումն իրականացվում է խաղաղ ժամանակաշրջանի մեկնման չվացուցակի համաձայն:

3.6.3. ԲԺՇԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

72. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական պաշտպանության բժշկական ապահովումը միջոցառումների համակարգ է՝ ուղղված մարդկանց աշխատունակության ապահովմանը, տուժածներին և հիվանդներին բժշկական օգնության ցուցաբերմանը, նրանց տեսակավորմանը, տեղափոխմանը բժշկական հիմնարկներ, բուժման կազմակերպմանը, վարակիչ հիվանդությունների առաջացման և տարածման կանխարգելմանը, շրջակա միջավայրի օբյեկտների (մթնոլորտի, ջրային ռեսուրսների, հողի, ընդերքի), ինչպես նաև սննդամթերքի և խմելու ջրի հիգիենիկ և համաճարակաբանական (այդ թվում՝ լաբորատոր) հսկողության կազմակերպմանը:

73. Համայնքում քաղաքացիական պաշտպանության բժշկական ապահովման համար պատասխանատու է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության եւ սոցիալական ապահովության վարչության տարածքային ստորաբաժանումները:

74. Համայնքում բժշկական ապահովումը իրականացվում է առկա (անկախ կազմակերպաիրավական ձևից) առողջապահական հիմնարկների ուժերով և միջոցներով, ինչպես նաև համայնքի բժշկական քաղաքացիական պաշտպանության կազմավորումների ուժերով:

75. Համայնքի բժշկական ապահովումն իրականացվում է տվյալ տարածաշրջանը սպասարկողբուժ.հաստատությունների կողմից:

3.6.4. ՍՆՆԴԱՄԹԵՐԱՅԻՆ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

76. Քաղաքացիական պաշտպանության սննդամթերային և նյութատեխնիկական ապահովումը միջոցառումների համակարգ է՝ ուղղված քաղաքացիական պաշտպանության ուժերի, միջոցառումների, ինչպես նաև տուժած բնակչությանն անհրաժեշտ նյութական, տեխնիկական միջոցներով և սննդամթերքով ժամանակին ու անխափան մատակարարմանը:

77. Համայնքի քաղաքացիական պաշտպանության սննդամթերային և նյութատեխնիկական ապահովումն իրականացնում է մարզային քաղաքացիական պաշտպանության առնտրի, սննդի ու նյութատեխնիկական մատակարարման ծառայությունը:

78. Համայնքի տարահանված բնակչության և քաղաքացիական պաշտպանության կազմավորումների անձնակազմի սննդամթերքով ապահովման հաշվակը ներկայացված է աղյուսակ N 7-ում:

79. Համայնքի տարահանված բնակչության անհրաժեշտ հագուստի և առաջին անհրաժեշտության ապրանքների ապահովման հաշվակը ներկայացված է հավելված N 8-ում:

80. Նյութական ապահովման միջոցառումներն ուղղված են նյութական միջոցների արտադրությանը, կուտակմանը, բաշխմանը և նպատակային օգտագործմանը:

81. Տեխնիկական ապահովման միջոցառումներն ուղղված են տեխնիկական միջոցների անխափան շահագործմանը, նրանց տեխնիկական սպասարկմանը, քաղաքացիական պաշտպանության միջոցառումներում ներգրավված տեխնիկայի բոլոր տեսակների շահագործմանն ու նորոգմանը, ինչպես նաև վերանորոգման ստորաբաժանումներին պահեստամասերով և շրջանառու միջոցներով ապահովմանը:

82. Քաղաքացիական պաշտպանության ուժերի նյութատեխնիկական ապահովումն իրականացվում է տեխնիկայով, վառելիքաքսուքային նյութերով, ջրով, սննդամթերքով, անհատական պաշտպանության և կապի միջոցներով, շինարարական և այլ տեսակի նյութական ու տեխնիկական միջոցներով, բժշկական գույքով, հագուստով, հատուկ հանդերձանքով և այլ նյութերով, տեխնիկական միջոցներով՝ բնակչության պաշտպանության միջոցառումները կազմակերպելու, ինչպես նաև օբյեկտների և նյութական արժեքների պահպանությունը ապահովելու, փրկարարական և այլ աշխատանքներ կատարելու նպատակով:

83. Նյութատեխնիկական ապահովման աղբյուրներ են հանդիսանում նախարարությունների, գերատեսչությունների և կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) տրամադրության տակ գտնվող նյութական արժեքները, պետական պահուստի միջոցները և միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրած մարդասիրական օգնությունը:

84. Անհրաժեշտ սննդամթերքը, հագուստը, առաջին անհրաժեշտության ապրանքները պետական պահուստից, սննդի և առնտրի խոշոր կազմակերպություններից այլ ծառայությունների հետ համատեղ կազմակերպում են նյութական միջոցների կուտակումը,

տեղափոխումը, պահպանումը և բաշխումը համապատասխան մարզային շարժական կետերում:

85. Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությունը տրամադրում է անհրաժեշտ քանակի բեռնատար, սառնարանային ավտոտրանսպորտ և ավտոբենզատարներ քաղաքացիական պաշտպանության տրանսպորտային միջոցառումների ապահովման համար:

86. Նյութական միջոցների պահպանությունն իրականացնում է համայնքի քաղաքացիական պաշտպանության հասարակական կարգի պահպանության խմբի ուժերով:

3.6.5. ԼՈՒՍԱՔՈՂԱՐԿՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

87. Լուսաքողարկումը ժամանակակից զենքի տեսակներից քողարկման տեխնիկական ապահովումն է: Այն անցկացվում է մթություն ստեղծելու նպատակով, օրվա ցանկացած ժամին, դժվարացնելով համայնքների և կազմակերպությունների հայտնաբերումը օպտիկական սարքերի միջոցով կամ բարձրությունից՝ տեսանելի հայտնաբերման ճանապարհով:

88. Համայնքում քաղաքացիական պաշտպանության լուսաքողարկման ապահովման համար պատասխանատու են տեղական ինքնակառավարման մարմինները:

89. Լուսաքողարկման գոտում գտնվող բնակավայրերում ու կազմակերպություններում լուսաքողարկման միջոցառումներն իրականացվում են նախօրոք:

90. Լուսաքողարկումը նախատեսվում է 2 ռեժիմով՝ մասնակի մթնեցում և լրիվ մթնեցում:

Մասնակի մթնեցման ռեժիմ մտցնելով տարածքներում պետք է՝

1) անջատվեն մի շարք օբյեկտների արտաքին լուսավորության սարքերը և նվազեցվեն մյուս օբյեկտների լուսավորությունները, ինչպես նաև լրիվ մթնեցման ռեժիմում աշխատելու համար նախատեսված լուսամփոփների և նշանների վրա տեղադրվեն քողարկման հարմարանքներ.

91. Լրիվ մթնեցման ռեժիմը մտցվում է ՝Օդային տագնապ՝ ազդանշանով և ավարտվում է <<Օդային տագնապի ավարտ>> ազդանշանով:

92. Մասնակի մթնեցման ռեժիմից լրիվ մթնեցման ռեժիմի անցնելը պետք է իրականացվի ոչ ավելի քան 3 րոպեում (արտադրական լույսերի լուսաքողարկման անցում՝ մինչև 10 րոպե):

93. Լուսաքողարկման ռեժիմների իրականացման նկատմամբ հսկողությունը սահմանում է համայնքի հասարակական կարգի պահպանման խումբը:

3.6.6. ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

94. Քաղաքացիական պաշտպանության տրանսպորտային ապահովումը միջոցառումների համալիր է, որն ընդգրկում է քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման համար նախատեսված բոլոր տիպի տրանսպորտային միջոցների նախապատրաստումը, աշխատունակ վիճակում պահպանումը, բաշխումը և շահագործումը:

95. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական պաշտպանության տրանսպորտային ապահովման համար պատասխանատու է Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությունը:

96. Համայնքում քաղաքացիական պաշտպանության տրանսպորտային ապահովման իրականացումն ապահովվում է քաղաքացիական պաշտպանության մարզային տրանսպորտային ծառայությունը համատեղ համայնքի քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմի հետ:

97. Քաղաքացիական պաշտպանության տրանսպորտային ծառայությունը՝

1) կազմակերպում է մարզի տարածքի ճանապարհների անցանելիության ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացումը.

2) կազմակերպում է մարզի տարածքի ավտոճանապարհներում ստեղծված իրավիճակի հետախուզումը, վերլուծումը, գնահատումը և անհրաժեշտ վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպումը և իրականացումը.

3) հաշվառում և տրանսպորտային միջոցներ է հատկացնում՝

ա. վտանգավոր տարածքներից բնակչության և նյութական արժեքների տարահանման տրանսպորտային ապահովման համար.

բ. փրկարարական ուժերի տեղափոխման համար.

գ. տուժածների փոխադրման համար.

դ. տրանսպորտային միջոցները չբավարարող քաղաքացիական պաշտպանության ծառայություններին և կազմակերպություններին՝ իրենց առջև դրված խնդիրների կատարման տրանսպորտային ապահովման համար:

98. Տրանսպորտային և տեխնիկական միջոցների հատկացումն իրականացվում է մարզի քաղաքացիական պաշտպանության պետի որոշմամբ՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից ներկայացված հայտերի:

99. Տրանսպորտային ապահովման ուժերն ու տեխնիկական միջոցները ներառում են մարզի տարածքում գործող ավտոտրանսպորտային, ճանապարհաշինական և վերանորոգման ու այլ կազմակերպությունների, քաղաքների և գյուղական համայնքների, ինչպես նաև մասնավոր անձանց սեփականություն հանդիսացող ավտոտրանսպորտային, ճանապարհաշինարարական և վերանորոգման մեքենաներն ու մեխանիզմները, մարզի երկաթուղային տրանսպորտը և դրանց շահագործողներին (վարորդներ, մեխանիզատորներ):

3.6.7. ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

100. Քաղաքացիական պաշտպանության ինժեներական ապահովումը միջոցառումների համակարգ է՝ ուղղված բնակչության պաշտպանությանը, քաղաքացիական պաշտպանության ուժերի և միջոցների առաջանցման հիմնական ու շրջանցիկ ուղիների ապահովմանը, խոցման օջախներում և աղետալի ջրածածկման գոտիներում փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպմանն ու իրականացմանը:

101. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական պաշտպանության ինժեներական ապահովման համար պատասխանատու է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությունը:

102. Համայնքի քաղաքացիական պաշտպանության ինժեներական ապահովումն իրականացնում է քաղաքացիական պաշտպանության ինժեներական ծառայությունը:

103. Քաղաքացիական պաշտպանության ինժեներական ծառայության խնդիրներից է՝

104. անհրաժեշտության դեպքում ծառայության կազմավորումների ստեղծումը, դրանց ապահովումն անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով, պատրաստումը և պահպանումը մշտական պատրաստականության վիճակում:

105. քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ապահովման պլանավորումը և իրականացումը՝ քաղաքացիական պաշտպանության համակարգի «Բարձր» և «Լրիվ» պատրաստության բերման (ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրվելու) ժամանակ:

106. ստեղծված իրադրության մասին իրական տեղեկատվության ստացումը, վերլուծումը և քաղաքացիական պաշտպանության պետին ինժեներական, փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպման վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը:

107. համայնքում պատսպարման հաշվարկներից ելնելով համապատասխան պաշտպանական կառույցների շինարարության պլանավորումը, կազմակերպումը և

պատսպարվող բնակչության ընդունման համար այդ կառույցները պատրաստ վիճակում պահելը:

108. պաշտպանական կառույցների և բնակչության պատսպարման համար նախատեսված այլ տարածքների նախապատրաստման, վերանորոգման աշխատանքների պլանավորումը և դրանց շահագործման նկատմամբ հսկողության սահմանումը:

109. պաշտպանական կառույցների հաշվառում և այդ կառուցներում բնակչության ամրագրում:

110. փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների ինժեներական ապահովում:

111. համայնքային քաղաքացիական պաշտպանության ինժեներական ծառայությունը՝

1) օժանդակում է քաղաքացիական պաշտպանության կազմավորումների առաջանցմանը դեպի խոցման օջախներ.

2) օժանդակում է վթարային շենքերի և կառույցների քանդման (վերականգնման) աշխատանքներին.

3) աջակցում է կոմունալ-էներգետիկ ցանցերում առաջացած վթարների վերացման աշխատանքներին.

4) աջակցում է արագ կառուցվող ապաստարանների և պարզագույն թաքստոցների շինարարությանը.

5) աջակցում է փլատակների տակ գտնվող պաշտպանական կառույցների հայտնաբերմանը, ելքերի մաքրմանը, օդի մատակարարմանը և պատսպարվածների դուրս բերմանը:

112. Ինժեներական ապահովման խնդիրները ժամանակին և արդյունավետ լուծելու համար անհրաժեշտ է ունենալ պարբերաբար ստացվող ճշգրիտ տեղեկատվություն՝ ստեղծված օպերատիվ իրավիճակի վերաբերյալ, որը ստացվում է ինժեներական հետախուզության միջոցով: Համայնքի ինժեներական ապահովման տեխնիկայի և տրանսպորտային միջոցների հաշվարկը ներկայացված է աղյուսակ N 9-ում:

113. Բնակչության պաշտպանությանն ուղղված ինժեներական ապահովման կարևորագույն միջոցառում է՝ բնակչության պատսպարումը պաշտպանական կառույցներում:

114. Պաշտպանական կառույցները բերվում են պատրաստականության՝ պատսպարվողների ընդունման համար ազդանշան տալու պահից սկսած 12 ժամվա ընթացքում:

3.6.8. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԵՎ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

115. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական պաշտպանության գյուղատնտեսական կենդանիների և մշակաբույսերի պաշտպանության ապահովման համար պատասխանատու է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը:

116. Համայնքի քաղաքացիական պաշտպանության գյուղատնտեսական կենդանիների և մշակաբույսերի պաշտպանության ապահովումն իրականացնում է քաղաքացիական պաշտպանության բույսերի և կենդանիների պաշտպանության մարզային ծառայությունը:

117. Գյուղատնտեսական կենդանիների և բույսերի պաշտպանության կազմակերպումն իրականացվում է մարզի ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգի մեջ ընդգրկված Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության եւ անասնաբուժական պետական տեսչության Շիրակի մարզային կենտրոնի համապատասխան տարածքային ստորաբաժանումների եւ համայնքի գյուղատնտեսական կենդանիների և

սշակաբույսերի պաշտպանության քաղաքացիական պաշտպանության կազմավորման ուժերով:

3.7. ՓՈԽԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

118. Համայնքի քաղաքացիական պաշտպանության պետը բնակչության պաշտպանության կազմակերպման նպատակով, նախօրոք կազմում է հարևան համայնքների, շինարարական կազմակերպությունների հետ փոխհամագործակցության պայմանագրեր, անհրաժեշտության դեպքում միմյանց օգնելու նպատակով:

119. Եթե համայնքի տարածքում տեղակայված է զորամաս, նախօրոք կազմվում է զորամասի հրամանատարության եւ համայնքի ղեկավարի միջեւ փոխհամագործակցության պլան:

IV. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ՀԱՆԿԱՐԾԱԿԻ ՀԱՐՁԱԿՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ

4.1. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ <<ՕԴԱՅԻՆ ՏԱԳՆԱՊ>> ԱԶԴԱՆՇԱՆԻ ԴԵՊՔՈՒՄ

120. <<Օդային տագնապ>> ազդանշանը տրվում է կապի և ազդարարման բոլոր միջոցներով, շարժական բարձրախոսային սարքերի օգնությամբ՝ միացվում են էլեկտրաշչակները և տրվում է տատանվող երկարատև (3 րոպե տևողությամբ) ձայնային ազդանշան:

121. Բնակչության ազդարարելու մասին որոշումն ընդունում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հակաօդային պաշտպանության և ավիացիայի միացյալ հրամանատարական կետից ստացված տեղեկատվության հիման վրա:

Բնակչության ազդարարումն իրականացվում է՝

1) ռազմական դրության ժամանակ, հակառակորդի հանկարծակի հարձակման, հակառակորդի հարձակման սպառնալիքի դեպքում՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության կողմից: Ազդանշանը տրվում է նաեւ մարզի զինվորական կայազորի հերթապահի միջոցով, ելնելով իրավիճակից ազդանշանի հաղորդմանը զուգահեռ կարող են տրվել նաեւ որոշակի հրահանգներ բնակչության վարվելակերպի վերաբերյալ: Գործողության մեջ են դրվում մարզի տարածքում առկա գործող էլեկտրական շչակները, քանի որ ազդարարման կենտրոնացված համակարգը մարզում բացակայում է, ուստի ազդարարումն իրականացվում է լոկալ միցամամբ, համայնք առ համայնք, յուրաքանչյուր շչակն առանձին՝ նախապես մշակված ծրագրով եւ յուրաքանչյուր շչակի միացման համար պատասխանատվություն է կրում տվյալ օբյեկտի, կազմակերպության տնօրենը:

2) հակառակորդի հարձակման հետևանքով, որպես երկրորդային խոցման օջախ, մարզի հավանական վտանգավոր, հատուկ, կարևորագույն նշանակության օբյեկտներում արտակարգ իրավիճակի առաջացման սպառնալիքի և ծագման դեպքում՝ տվյալ կազմակերպության ղեկավարի կողմից, Շիրակի մարզային փրկարարական վարչության միջոցով.

3) <<Օդային տագնապ>> ազդանշանի դեպքում անհապաղ իրականացվում է հետևյալ միջոցառումները՝

ա. լրիվ կամ մասնակի լուսաքողարկում, մշտական էլեկտրասնուցման անհրաժեշտություն ունեցող կազմակերպությունների էլեկտրամատակարարման ապահովմամբ.

բ. բնակչության պատսպարում կցագրված (կամ մոտակա) պաշտպանական կառույցներում.

գ. քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմի պահեստային կառավարման կետեր տեղափոխումը:

122. Հնարավորության դեպքում իրականացվում են անհատական պաշտպանության միջոցների, ճառագայթային և քիմիական հետախուզության սարքերի տեղափոխում պաշտպանական կառույցներ:

123. Կազմակերպություններում արտադրությունների անվթար կանգնեցումը կատարվում է համաձայն նախապես մշակված գրաֆիկի:

124. Անընդհատ տեխնոլոգիական պրոցեսներ ունեցող կազմակերպությունները, որտեղ անհնարին է արտադրական պրոցեսի անվթար կանգնեցումը, աշխատող հերթափոխի աշխատակիցների պատսպարման նպատակով՝ պետք է ստեղծված լինեն առանձին թաքստոցներ անմիջապես աշխատատեղերի մոտ:

4.2. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ <<ՕԴԱՅԻՆ ՏԱԳՆԱՊԻ ԱՎԱՐՏ>> ԱԶԴԱՆՇԱՆԻ ԴԵՊՔՈՒՄ

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԲՈԼՈՐԻՆ (տես. 346 –Ն 06.04.2017թ)

125. <<Օդային տագնապի ավարտ>> ազդանշանը տրվում է կապի և ազդարարման բոլոր միջոցներով, շարժական բարձրախոսային սարքերի օգնությամբ՝ միացվում են էլեկտրաշչակները և տրվում է անընդհատ երկարատև (3 րոպե տևողությամբ) ձայնային ազդանշան:

126. Բնակչության ազդարարելու մասին որոշումն ընդունում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հակաօդային պաշտպանության և ավիացիայի միացյալ հրամանատարական կետից ստացված տեղեկատվության հիման վրա:

127. <<Օդային տագնապի ավարտ>> ազդանշանի դեպքում իրականացվում է հետևյալ միջոցառումները՝ Ուշադրություն բոլորին (տես. 346 –Ն 06.04.2017թ)

1) ստուգվում և վերականգնում է կառավարման, կապի և ազդարարման համակարգերը.

2) իրականացվում է հետախուզություն՝ հիմնական ուշադրություն դարձնելով առավել մարդաշատ, ինչպես նաև պաշտպանական կառույցների և բարձր վտանգավորություն ներկայացնող կազմակերպությունների տեղակայման վայրերին.

3) ճշգրտվում և պատրաստականության են բերվում պահպանված քաղաքացիական պաշտպանության կազմավորումները: Համայնքի քաղաքացիական պաշտպանության ուժերի եւ միջոցների հաշվարկը ներկայացված են աղյուսակ N 10-ում:

4) կազմակերպվում և անցկացվում են փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ:

5) կազմակերպվում և անցկացվում է տուժածների բժշկական օգնություն.

6) կազմակերպվում է քանդված և վնասված պաշտպանական կառույցների վերականգնման և չբավարարող պաշտպանական կառույցների շինարարություն.

7) կազմակերպվում է դոզաչափական հսկողություն:

V. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

128. Հայաստանի Հանրապետության վարչապետը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական պաշտպանության պետը և ղեկավարում է քաղաքացիական պաշտպանության ողջ գործընթացը:

129. Քաղաքացիական պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված մարմնի՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական պաշտպանության պետի տեղակալ:

130. Համայնքների և կազմակերպությունների ղեկավարները համապատասխանաբար հանդիսանում են համայնքների և կազմակերպությունների քաղաքացիական պաշտպանության պետեր և կառավարում են իրենց ոլորտի քաղաքացիական պաշտպանության գործընթացը:

131. Լիազորված մարմնի տարածքային ստորաբաժանումների ղեկավարները հանդիսանում են մարզերի քաղաքացիական պաշտպանության պետերի տեղակալներ:

132. Քաղաքացիական պաշտպանության պետերը իրենց իրավասության սահմաններում՝

1) պատասխանատվություն են կրում քաղաքացիական պաշտպանության պատրաստականության համար.

2) կազմակերպում և ղեկավարում են քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացումը.

3) հաստատում և գործողության մեջ են դնում քաղաքացիական պաշտպանության պլանները.

4) արձակում են քաղաքացիական պաշտպանությանը վերաբերվող որոշումներ, հրամաններ, հրահանգներ.

5) վերահսկում են քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կատարումը.

6) իրականացնում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:

133. Համայնքներում և կազմակերպություններում քաղաքացիական պաշտպանության միջոցառումները իրականացնում են քաղաքացիական պաշտպանության կազմավորումները:

134. Համայնքում քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կառավարումը իրականացվում է համայնքի քաղաքացիական պաշտպանության պետի հիմնական կամ պահեստային կառավարման կետերից:

135. Կառավարման պահեստային կետերը ստեղծվում են նախօրոք՝ խաղաղ ժամանակաշրջանում:

136. Քաղաքացիական պաշտպանության ղեկավար մարմինների կողմից պահեստային կառավարման կետերի պատրաստ վիճակի բերումը և զբաղեցումը իրականացվում է համաձայն «Լրիվ» պատրաստականության աշխատակարգի միջոցառումների ցանկի:

137. Քաղաքացիական պաշտպանության հարցերով տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների գործունեությունը համակարգում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության մարզային փրկարարական վարչությունները :

Գյումրի համայնքի ՔՊ շտաբի պետ _____Ա.Պապիկյան

Ց Ա Ն Կ

- Համայնքի ՔՊ պլան ընդհանուր դրույթներ (հավելված)

1. Հիմնական ցուցանիշներ համայնքի քաղաքացիական պաշտպանության վիճակի
Այլ	- Արագարձագանքմանիրականացմանհամարանհրաժեշտտեղեկատվությունը	

4.4 Բնակչության տարահանման կազմակերպում

Տարահանումը բնակչության պաշտպանության հիմնական ձևերից մեկն է: Այն իրականացվում է վտանգավոր տարածքներից անվտանգ տարածքներ մարդկանց ժամանակավոր տեղափոխման և տեղաբաշխման միջոցով:

Տարահանումն իրականացվում է այնպիսի արտակարգ իրավիճակների առաջացման կամ անմիջական սպառնալիքի դեպքում, որի հետևանքով որոշակի տարածքներում (բնակավայրերում, օբյեկտներում) կարող են առաջանալ մարդկանց կյանքի և կենսագործունեության բնականոն պայմանների վրա բացասաբար ազդող գործոններ: Տարահանման նպատակն է հնարավոր մարդկային, կենդանիների, նյութական և մշակութային կորուստների կանխումն ու նվազեցումը:

Համայնքի բնակչության տարահանումն իրականացվում է երկրաշարժի, ,սելավի,փլուզման,ջրամբարների պատվարների փլուզման, գետերի ջրերի հորդացման հետևանքով ջրածածկման,պայթյունի,հրդեհի,ՀՀ վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ ՀՀ Ազգային ժողովի կողմից պատերազմ հայտարարվելու դեպքում, խաղաղ պայմաններում հակառակորդի ուղիղ կրակի դեպքում և այլն:

Անվտանգ տարածքում տարահանվող բնակչության համար որպես ժամանակավոր կացարաններ օգտագործվում են դպրոցները, ակումբները, հյուրանոցները, հանրակացարանները, բնակելի տները՝ անկախ սեփականության ձևից: Նշված ժամանակավոր կացարանների տրամադրումն իրականացվում է համարժեք փոխհատուցմամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Տարահանում կարող է իրականացվել բնակչության պաշտպանության մյուս ձևերի հետ համատեղ, այն ուղեկցվում է բնակչության պատսպարմամբ, անհատական պաշտպանական միջոցների ապահովմամբ: Բնակչության տարահանման մասին որոշումն ընդունում են Գյումրի համայնքի ղեկավարը, իսկ նրանց բացակայության դեպքում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նրանց փոխարինող անձը: Համայնքի ղեկավարը որոշում ընդունելուց առաջ կամ հետո ընդունված որոշման մասին տեղեկացնում է համայնքային պետական կառավարման մարմինների ստորաբաժանումներին, ինչպես նաև և զեկուցում է Հայաստանի Հանրապետության կառավարությանը: Համայնքի ղեկավարը նաև որոշում է տարահանման ժամկետները (սկիզբը, ավարտը) ձևը (հետիոտն շարասյուներով, տրանսպորտային միջոցներով) և այլն: Եթե բնակավայրի և համայնքապետարանի կապը կտրված է լինում ու բնակավայրում անհրաժեշտություն է առաջանում իրականացնել բնակչության տարահանում, ապա տարահանման որոշումը կայացնում է բնակավայրի վարչական ղեկավարը՝ առաջին իսկ հնարավորության դեպքում հաղորդելով Համայնքի ղեկավարին:

Բնակչության տարահանումը նախատեսվում է տարահանել հետիոտն շարասյուներով կամ տրանսպորտային միջոցներով՝ ավտոշարասյուներով:

Հիմնականում որպես տարահանման նախնական հավաքման կետ ընտրված են Գյումրիի ուսումնական հաստատությունները, որտեղ իրականացվում է բնակչության հավաք, հաշվառում, այնուհետ տարահանում տվյալ դեպքի համար ընտրված տարածք: Երկրաշարժի դեպքում բնակչությունը նախապես հավաքվում է ուսումնական հաստատությունում, որտեղ իրականացվում է փրկվածների, տուժածների, կորածների մասին տեղեկատվության հավաքագրում: Հավաքված բնակչությունից հավաքագրվում է նաև ճանապարհների և առաջացած երկրորդային խոցման գործոնների մասին տեղեկատվությունը:

Այնուհետ համայնքի ղեկավարի որոշմամբ տարահանվողները կարող են շարունակել մնալ ուսումնական հաստատության տարածքում կամ տեղափոխվել նախապես որոշված տարահանման հավաքատեղի:

Սելավների կամ ջրամբարի պատվարների փլուզման դեպքում տարահանումը, որի ժամանակ ստանալով ազդանշանը բնակչությունը անմիջապես տեղափոխվում է նախապես որոշված անվտանգ տարածքներ առանց հավաքակետ ժամանելու, քանի որ ժամանակի սղության պատճառով անհրաժեշտ է արագ կազմակերպել տարահանումը:

Տարահանումը հաջող իրականացնելու, ինչպես նաև առաջիկա ժամանակահատվածում բնակչության և բնակավայրերի հոգսերը թեթևացնելու համար տարահանվողները նախապես պետք է իրազեկված լինեն տարահանման կանոններին, իրենց հետ վերցվող փաստաթղթերի, նյութական

արժեքների և մաքուր խմելու ջրի և որոշակի սննդի պաշարների մասին: Այս ամենը պետք է լինի նախապես պատրաստված և պահպանվի մատչելի վայրում:

Քիմիապես վտանգավոր օբյեկտի վթարի դեպքում բնակչության տարահանումը իրականացվում է տրանսպորտային միջոցներով բնակիչների տներից: Ազդանշանը ստանալուց հետո բնակչությունը պատսպարվում է իրենց տներում, նկուղներում կամ ձեռնահարկում՝ կախված արտանետված նյութի առանձնահատկությունից, հերմետիկացնում այն և սպասում տարահանման տրանսպորտին:

Տարահանման և պատսպարման պատասխանատուն բնակչության տարահանման կազմակերպման ժամանակ պետք է համագործակցի ավտոտրանսպորտային կազմավորումների, Ոստիկանության և ճանապարհային ոստիկանության հետ հասարակական կարգի և անվտանգ երթևեկության կազմակերպման նպատակով, ավտոշարասյուների և հետիոտն շարասյուների կարգավորված հոսքի ուղղորդման և այլ հարցերով:

Բնակչության տարահանման ժամանակ գործողության մեջ են դրվում սույն պլանի հավելված N 5 և հավելված N 6:

Երկրաշարժի դեպքում տարահանման կետերի որոշումը.

Ընթացքը	Տարածքային կետ	Տեսակներ	Բնակավայրի օգտագործման ժամանակահատվածը
1 փուլ	Տարահանման կետ	Ժամանակավոր տեղաբաշխման կետեր	Սկսած մի քանի ժամից մինչև 1 օր
2 փուլ	Տեղաբաշխման կետեր	Երկարատև բնակության վայրեր, կացարաններ, (բազմաբնակարանային շենքեր,սեփական տներ)	Մշտական բնակավայրով ապահովմամբ (մինչև 1 տարի)
Մշտական բնակության վայրը	Հիմնական բնակավայրը	Բազմաբնակարանային շենքեր,սեփական տներ	

4.5 Բնակչության պատսպարման կազմակերպում

Համայնքի բնակչության պատսպարում իրականացվում է հետևյալ դեպքերում՝

- ուժեղ քամիների,
- կարկուտի,
- կայծակի/ամրոպի,
- վտանգավոր թունավոր նյութեր արտադրող կամ արտադրական պրոցեսում դրանք օգտագործող արդյունաբերական օբյեկտներում վթարի կամ դրա անմիջական սպառնալիքի,
- ռադիոակտիվ կամ թունավոր նյութերի տրանսպորտային փոխադրումների ժամանակ տեղի ունեցած վթարի,
- ՀՀ վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ ՀՀ Ազգային ժողովի կողմից պատերազմ հայտարարվելու դեպքում և այլն):

Կազմակերպություններում, այդ թվում նախադպրոցական և հանրակրթական հաստատություններում անձնակազմին և երխաներին պատսպարում են նկուղներում (նկուղների հարմարեցում):

4.6 Բնակչությանը անհատական պաշտպանական միջոցների ապահովման կազմակերպում

Անհատական պաշտպանության միջոցներով ապահովումը առնչվում է այն համայնքներին, որոնց տարածքում առկա է վտանգավոր արտադրություն կամ պահեստներ, կամ Համայնքը ընկնում է վտանգավոր օբյեկտի ազդեցության գոտում

Համայնքի ԱՌԿ խորհուրդը քիմիական վթարի սպառնալիքի կամ առաջացման դեպքում քայլեր է ձեռնարկում ազդարարման և բնակչության համար անհատական պաշտպանության միջոցներով ապահովման ուղղությամբ:

Անհատական պաշտպանության միջոցների բացակայության դեպքում, բնակչությանը իրազեկման միջոցով կտրամադրվի տեղեկատվություն մաշկի պաշտպանության հասարակ միջոցների մասին, մասնավորապես՝ որպես մաշկի պաշտպանության հասարակ միջոցներ, կարող են հարմարեցվել սովորական հագուստը, մարզահագուստները (սպորտային կոստյումները) և կոշիկները, որոնք ենթարկվում են հերմետիկացման: Ցանկացած մարզահագուստ, ռետինե կոշիկներ և ձեռնոցներ կարող են դառնալ պաշտպանական զտող լրակազմ, եթե դրանք նախօրոք հագեցվեն հատուկ բաղադրությամբ: Այդ նպատակով կիրառվում են զանազան լվացող միջոցների լուծույթներ և օճառայուղային էմուլսիաներ: Մաշկի պաշտպանության հասարակ միջոցներն օգտագործվում են հակագազերի հետ զուգորդված՝ ճառագայթային փոշիներից և մանրէաբանական միջոցներից, իսկ քիմիական լուծույթներով հագեցնելուց հետո նաև մարտական թունավոր նյութերից պաշտպանվելու համար:

Համայնքը բնակչությանն ուսուցանում է սեփական ուժերով շնչառական օրգանների պաշտպանության հասարակ միջոցների պատրաստման ու մաշկի պաշտպանության համար հագուստի հարմարեցման և դրանցից օգտվելու հնարքները:

4.7Ուժերի և միջոցների պատրաստվածության բերում

Աշխատանքային և օպերատիվ խմբերը բերվում են պատրաստվածության, անհրաժեշտության դեպքում իրականացվում է օպերատիվ խմբերի տեղաշարժ վտանգավոր վայրեր և իրականացվում է շուրջօրյա հերթապահություն:

Աշխատանքային և օպերատիվ խմբերի կազմը որոշվում է ԱՌԿ խորհրդի կողմից: ԱՌԿ խորհրդի որոշմամբ համայնքի փրկարարական և որոնողափրկարարական խմբերը բերվում են բարձր պատրաստվածության:

Օպերատիվ խմբերը հասնելով համայնքապետարան՝ անմիջապես կապ է հաստատում ԱՌԿ խորհրդի և ԱԻՆ ՓԾ ՄՓՎ հետ:

Աշխատանքային խմբերը հասնելով համայնքապետարան իրականացնում է.

- Տարբեր աղբյուրներից տեղեկատվության հավաք, ընդհանրացում վերլուծություն՝ ստեղծված իրավիճակի և ուժերի ու միջոցների պատրաստվածության վերաբերյալ:
- Ստեղծված իրավիճակի, ուժերի և միջոցների պատրաստվածության վերաբերյալ զեկույցների պատրաստում և ներկայացում՝ ԱՌԿ խորհրդին և ԱԻՆ ՓԾ ՄՓՎ-ին:
- Արձագանքման ռեժիմին անցնելու վերաբերյալ՝ որոշման ընդունման համար առաջարկությունների ներկայացում:

Արձագանքման ռեժիմին անցնելու կարգ.

Աշխատանքային ժամերին Ժ+1, ոչ աշխատանքային ժամերին Ժ+2 իրականացվում է ԱՌԿ խորհրդի և համայնքի ոլորտային պատասխանատուների հավաք: ԱՌԿ խորհրդի նախագահի որոշմամբ իրականացվում է Խորհրդի անդամների ժողով՝

-խորհրդի որոշմամբ պատրաստվում է առաջարկություն համայնքի ղեկավարին՝ արձագանքման ռեժիմի անցման վերաբերյալ:

-համայնքի ղեկավարի որոշմամբ իրականացվում է անցում արձագանքման ռեժիմին:

-խորհրդի ղեկավարի որոշմամբ կառավարման ուժերն ու միջոցները բերվում է բարձր պատրաստվածության:

4.8 Փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպում

Մարդկանց կյանքի փրկման աշխատանքներին զուգահեռ իրականացվում են անհետաձգելի վթարավերականգնողական և կենսագործունեության վերականգնման (կապի համակարգերի, գազա, ջրա, էլեկտրամատակարարման վերականգնման և այլն) աշխատանքներ: Անհետաձգելի միջոցառումները կկազմակերպվեն այնպես, որ հնարավորինս արդյունավետ օգտագործվեն չտուժած մարդկային ուժերը և նյութական միջոցները: Արձագանքման միջոցառումներին կներգրավվեն նաև մոտակա չտուժած համայնքների, բնակավայրերի և կազմակերպությունների մարդկային ուժերը, տեխնիկան և նյութական միջոցները:

Փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքները պատշաճև լիարժեք կազմակերպելու համար իրականացվում է կարիքների գնահատում (փրկարարական խմբերի, հատուկ տեխնիկայի և այլն) և անհրաժեշտ օգնության համար ներկայացվում է հայտ մարզպետարան կամ կառավարություն:

Հրշեջ-փրկարարական աշխատանքների պատասխանատուն՝ համագործակցելով համայնքապետարանի ղեկավարների հետ, հավաքագրում և ստեղծում է փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ կատարող կամավորական խմբեր:

4.9 Հրդեհաշիջման կազմակերպում

Հրդեհաշիջման աշխատանքները կազմակերպվում և իրականացվում է ԱԻՆ ՓԾ Շիրակի մարզային փրկարարական վարչության Գյումրու թիվ 48 հրշեջ փրկարարական ջոկատի միջոցով: Հրդեհաշիջման կազմակերպման համար թիվ 48 հրշեջ փրկարարական ջոկատի կողմից տրամադրվում է 2 մարտական հաշվարկ՝ յուրաքանչյուրը բաղկացած 6 հոգուց:

Արտակարգ իրավիճակի դեպքում իրականացվում է կարիքների գնահատում հրշեջ-փրկարարական ծառայության մասով (մարտական հաշվարկ, անձնակազմ, գույք և այլն) և անհրաժեշտ օգնության համար ներկայացվում է հայտ մարզային կամ հանրապետական փրկարարական ծառայություն:

Հրշեջ-փրկարարական աշխատանքների պատասխանատուն՝ համագործակցելով համայնքապետարանի ղեկավարների հետ, հավաքագրում և ստեղծում է հրդեհաշիջման աշխատանքներ կատարող կամավորական խմբեր:

4.10 Հասարակական կարգի պահպանման կազմակերպում

Աղետի դեպքում համայնքի ոստիկանական ծառայությունը կազմակերպում է հասարակական կարգի ապահովումը, ուշադրություն դարձնելով տարահանման երթուղիների, տարահանման հավաքատեղիների, մատակարարվող նյութերի ու սննդամթերքի երթուղիների անվտանգության ապահովման ու տարահանված բնակչության գույքի պահպանումը կազմակերպելու վրա:

Հասարակական կարգի պահպանում է իրականացնում փրկարարական աշխատանքների կատարման վայրերում՝ ապահովելով փրկարարների անվտանգությունը, այդ թվում արտերկրից ժամանած: Համայնքի ոստիկանական ծառայության ուշադրության կենտրոնում պետք է լինեն համայնքի ծերերի, երեխաների, կանանց (հատկապես հղի և մանկիկներին խնամող) անվտանգության ապահովման հարցերը:

Հասարակական անվտանգության ապահովման համար տրամադրվում է ոստիկանական խմբեր՝ յուրաքանչյուրը բաղկացած ____ հոգուց:

Արտակարգ իրավիճակի դեպքում իրականացվում է կարիքների գնահատում ոստիկանական ծառայության մասով (անձնակազմ, գույք և այլն) և անհրաժեշտ օգնության համար ներկայացվում է հայտ մարզային կամ հանրապետական ոստիկանական ծառայություն:

Հասարակական կարգի պահպանման պատասխանատուն՝ համագործակցելով համայնքապետարանի և բնակավայրերի ղեկավարների հետ, հավաքագրում և ստեղծում է հասարակական կարգը ապահովող կամավորական խմբեր:

4.11Բնակչության բժշկական և առաջին օգնության կազմակերպում

Արտակարգ իրավիճակներում բնակչության բժշկական պաշտպանությունը ներառում է՝
- համայնքի առողջապահական հաստատությունների պատրաստակամությունը արտակարգ իրավիճակներում տուժած բնակչությանը առաջին բժշկական եւ մասնագիտական օգնություն տրամադրելուն,
- համայնքի առողջապահական հաստատությունների ուժերը և միջոցների մշտական պատրաստվածության ապահովում,
- դեղորայքի և բժշկական գույքի ստեղծում ու պահպանում:

Արտակարգ իրավիճակներում տուժած բնակչությանը բժշկական օգնություն ցուցաբերելու համար օգտագործվում է համայնքի ողջ բժշկական բազան՝ կազմված՝ բժշկական հաստատություններից, ներառյալ՝ հիվանդանոցները, պոլիկլինիկաները: Ներգրավում է բժշկական ողջ անձնակազը:
Արտակարգ իրավիճակներում տուժած բնակչությանը առաջին բուժօգնություն ցուցաբերելու համար տրամադրվում է շտապ բուժօգնության բրիգադներ:

Եթե երկրաշարժի կամ այլ վտանգի հետևանքով հնարավոր չէ բժշկական հաստատությունների շենք-շինությունները շահագործել՝ տուժածներին բժշկական օգնություն ցուցաբերելու համար, ապա գնահատման արդյունքում որոշվում և անվտանգ վայրերում ստեղծվում են բժշկական օգնության տեղամասեր:

Բժշկական ծառայության ուժերն ու միջոցները գտնվում են մշտապես պատրաստ վիճակում և արտակարգ իրավիճակի ժամանակ աշխատելու են արտակարգ ռեժիմով: Շուրջօրյա հերթապահություն է սահմանվում բժշկական հաստատություններում և տարահանման հավաքատեղիներում:

Արտակարգ իրավիճակի դեպքում իրականացվում է կարիքների գնահատում բժշկական մասով (մասնագետներ, բժշկական գույք, դեղորայք) և անհրաժեշտ օգնության համար ներկայացվում է հայտ:
Տուժածների մեծ հոսքի դեպքում համայնքի բժշկական կենտրոնը գործելու է իր ողջ հզորությամբ:
Բժշկական օգնության կազմակերպման պատասխանատուն՝ համագործակցելով համայնքապետարանի և բնակավայրերի ղեկավարների հետ, հավաքագրում և ստեղծում է առաջին օգնության ցուցաբերման կամավորական խմբեր (ներգրավվում են համապատասխան կրթություն և գիտելիքներ ունեցող անձիք):

Մթնոլորտի մեջ հայտնված ռադիոակտիվ նյութերի սպառնալիքի կամ ճառագայթային վթարի առաջացման դեպքում բնակչության շրջանում իրականացվում է յոդի պրոֆիլակտիկա: Հեղուկ յոդի կամ կալիումի յոդի պատրաստումը իրականացվում է ձեռքի տակ եղած միջոցներով:Յոդացված պատրաստուկների բացակայության դեպքում օգտագործել 5%-անոց յոդի լուծույթ (3-5 կաթիլ 1 բաժակ ջրում՝ մեծահասակների դեպքում, և մինչև 2 տարեկան երեխաների համար՝ 1-2 կաթիլ 100 մլ հեղուկում): Ընդունել յուրաքանչյուր 5-7 ժամը մեկ:

4.12 Տրանսպորտային ապահովման կազմակերպում

Տրանսպորտային ապահովումը ներառում է՝
- բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման աջակցությունը (հատկապես ծերերի, երեխաների, հղի կանաց և այլ խոցելի բնակիչների),
- գյուղատնտեսական և ընտանի կենդանիների տեղափոխման աջակցությունը,

- սննդամթերքով, խմելու ջրով և այլ անհրաժեշտ պարագաներով մատակարարումը,
- ԱԻ գոտի ուժերի և միջոցների տեղափոխման աջակցություն՝ վթարափրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքների իրականացման նպատակով,
- նյութական և շինարարական միջոցների, ինչպես նաև գյուղատնտեսական և ընտանի կենդանիների համար սննդի տեղափոխման աջակցություն:

Տարահանման, վթարափրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքների իրականացման նպատակովտրանսպորտի և տեխնիկայի միջոցները.

Բնակավայրի անվանումը	Թեթև մարդատար	Ավտոբուս /միկրո-ավտոբուս	Բեռնատար, որից ինքնաթափ	Կողավոր	Էքսկա-վատոր	Ավտո կռունկ	Ժամանման վայր	Ժամանում (Ժ+)	Ծանոթություն
ԳՅՈՒՄՐԻ	16459	15/36	6/4		0	1	համայնքապետարան	2	
ԸՆԴԱՄԵՆԸ									

4.13 Կապի և տեղեկատվության փոխանակման ապահովման կազմակերպում

Աղետի հետևանքները նվազեցնելու համար անհրաժեշտ օպերատիվ ստանալ տեղեկատվություն ստեղծված իրավիճակի վերաբերյալ, որից հետո տրամադրել հստակ հրահանգներ աղետի հետևանքների վերացման և վարվելակերպի կանոնների վերաբերյալ: Ելնելով վերոգրյալից անհրաժեշտ է արագ վերականգնել կապի և տեղեկատվության հաղորդման ավտոմատացված համակարգերը: Տեղեկատվության հաղորդման արագությունը և հստակությունը առաջին հերթին կախված է կապի անխափան աշխատանքից: Կապի և տեղեկատվական փոխանակման ապահովման պատասխանատուն համագործակցելով համայնքապետարանի, բնակավայրերի ղեկավարների և տարածքային կապի օպերատորների հետ, հավաքագրում և ստեղծում է կապի և տեղեկատվական փոխանակման ապահովման կամավորական խմբեր: Ստեղծված խմբերի գեր խնդիրն է կապի ապահովումը՝ ԱՌԿ խորհրդի և արձագանքող ստորաբաժանումների, տարահանման հավաքատեղիների, հարևան համայնքների ու պետական կառավարման մարմինների միջև: Անհրաժեշտության դեպքում, կապի կազմակերպման համար կօգտագործվի նաև կառույցների, ծառայությունների և այլ կազմակերպությունների գործող կապի միջոցները:

4.14 Նյութատեխնիկական ապահովման կազմակերպում

Տեխնիկական ապահովումը իրականացվում է ավտոտրանսպորտային միջոցների և հատուկ տեխնիկայի մշտապես պատրաստ վիճակում պահելու նպատակով՝ փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացման համար:

Տեխնիկական ապահովումը ներառում է՝

-վնասված տեխնիկայի հավաքագրման կետերի որոշում,
-վնասված տեխնիկայի վերանորոգման կետերի որոշում,
-պահեստամասերի և վերանորոգման նյութերի մատակարարում,
-վերանորոգման կետերի որոշում:

Նյութական ապահովումը փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ նյութական միջոցների աջակցությունն է:

Արտակարգ իրավիճակի դեպքում իրականացվում է կարիքների գնահատում նյութատեխնիկական մասով և անհրաժեշտ օգնության համար ներկայացվում է հայտ մարզպետարան կամ կառավարություն:

Նյութատեխնիկական ապահովման պատասխանատուն՝ համագործակցելով համայնքապետարանի և բնակավայրերի ղեկավարների հետ, հավաքագրում և ստեղծում է նյութատեխնիկական ապահովման կամավորական խմբեր:

4.15 Կոմունալ-էներգետիկ ապահովման, կապի և տրանսպորտային հաղորդակցության կապերի առաջնահերթ վերականգնողական աշխատանքների իրականացում

Կոմունալ-էներգետիկ անվտանգության ապահովումը և կապի ու տրանսպորտային հաղորդակցության կապերի վերականգնումը համայնքի կենսապահովման համակարգի բաղկացուցիչ մասն է:

Կոմունալ–էներգետիկապահովման, կապիևտրանսպորտայինհաղորդակցությանկապերիառաջնահերթվերականգնողականաշխատանքներիիրականացմանհերթականությունը.

Ոլորտը	
Ջրամատակարարում, կոյուղի	1. ջրահավաքման, ջրամաքրման, ջրամատակարարման, ջրահեռացման, ջրաբաշխմանևտնօրինմանհիմնականօբյեկտներ, 2. մագիստրալայինգծերևնրանցառնչվողօբյեկտներ, 3. ջրահեռացմանգծեր, կառավարմանկետերը, ապաստարանները, բժշկականօգնությանկետերըմագիստրալայինգծերինմիացնողկիցօբյեկտներ, 4. ցանցիհատված, ներառյալկիցօբյեկտներ՝ ընդունակզգալիկրճատելջրամատակարարումիցզրկվածբնակավայրերի(շրջանների) քանակը, 5. այլգծեր, կից օբյեկտներ
Էներգամատակարարում	1. էլեկտրաէներգիայիարտադրման, փոխակերպման, հաղորդմանևբաշխմանհիմնականօբյեկտներ, 2. էլեկտրահաղորդմանմագիստրալայինմալուխներևկիցտեխնիկականօբյեկտներ, 3. կառավարմանկետերը, ապաստարանները, բուժհաստատություններըէլեկտրականությամբապահովվողտեղայինմալուխներևկիցտեխնիկականօբյեկտներ, 4. էլեկտրահաղորդմանմալուխներևկիցտեխնիկականօբյեկտներ՝ ընդունակզգալիկրճատելէլեկտրամատակարարումիցզրկվածբնակավայրերի (շրջանների) քանակը, 5. էլեկտրամատակարարմանայլմալուխներևկիցօբյեկտներ

Գազամա- տակարարում	1. հիմնականօբյեկտներ՝ կարգավորողկայաններ, խոշորպահեստարաններ, 2. մագիստրալայինգծերևկիցտեխնիկականօբյեկտներ, 3. գազամատակարարմանտեղայինցանցիճյուղեր, կառավարմանկետերը, ապաստարանները, բժշկականօգնությանկետերըմագիստրալայինգծերինմիացնողկիցտեխնիկականօբյեկտներ, 4. մագիստրալայինևատեղականցանցիճյուղերևկիցտեխնիկականօբյեկտներ՝ ընդունակզգալիկրճատելգազամատակարարումիցզրկվածբնակավայրերի (շրջանների) քանակը, 5. գազաապահովմանայլցանցերևկիցտեխնիկականօբյեկտներ,
Կապ	1. հիմնականօբյեկտներ՝ կարգավորողկայաններ, խոշորպահեստարաններ, 2. մագիստրալայինգծերևկիցտեխնիկականօբյեկտներ, 3. գազամատակարարմանտեղայինցանցիճյուղեր, կառավարմանկետերը, ապաստարանները, բժշկականօգնությանկետերըմագիստրալայինգծերինմիացնողկիցտեխնիկականօբյեկտներ, 4. մագիստրալայինևատեղականցանցիճյուղերևկիցտեխնիկականօբյեկտներ՝ ընդունակզգալիկրճատելգազամատակարարումիցզրկվածբնակավայրերի (շրջանների) քանակը, 5. գազաապահովմանայլցանցերևկիցտեխնիկականօբյեկտներ
Պաշտպա- նություն	1. խոշորհիդրոտեխնիկականկառույցներ (ամբարտակներ, ջրապատնեշներ), 2. հիմնականգետերիերկայնքովկարգավորիչկառույցներ, 3. պոչամբարներ,

4.16 Ինժեներական միջոցառումների կազմակերպում

Ինժեներական միջոցառումների ապահովումը կազմակերպվում, որպեսզի բարենպաստ ինժեներական միջավայր ստեղծվի բնակչության պաշտպանության և արտակարգ իրավիճակների վերացման միջոցառումներ ձեռնարկելու համար:

Անհրաժեշտության դեպքում ինժեներական տեխնիկայով արագ ստեղծել լրացուցիչ ճանապարհներ, մաքրել և տեղափոխել շինարարական աղբը, ինչպես նաև գործողություններ համայնքի վերականգնման / վերակառուցման ուղղությամբ:

Արտակարգ իրավիճակի դեպքում իրականացվում է կարիքների գնահատում ինժեներական միջոցառումների ապահովման մասով և անհրաժեշտ օգնության համար ներկայացվում է հայտ մարզպետարան կամ կառավարություն:

Ինժեներական միջոցառումների իրականացման համար ներգրավում են համայնքում առկա հնարավոր տեխնիկան:

Ինժեներական միջոցառումների ապահովման պատասխանատուն՝ համագործակցելով համայնքապետարանի և բնակավայրերի ղեկավարների հետ, հավաքագրում և ստեղծում է ինժեներական միջոցառումների ապահովման կամավորական խմբեր:

Արտակարգ իրավիճակների նախարարության համակարգման ներքո իրականացնում են ճանապարհների, մայրուղիների, փողոցների մաքրման և անցողականության ապահովման աշխատանքներ: ՀՀ ՊՆ, ճանապարհաշինարարական և այլ շինարարական կազմակերպությունների ուժերով իրականացվում են ճանապարհների, մայրուղիների, փողոցների մաքրման և հրատապ ինժեներա-վերականգնողական (կամուրջների ամրացում, նորոգում և այլն) աշխատանքներ: Այս աշխատանքների նպատակն է ապահովել յուրաքանչյուր ճանապարհին, մայրուղում, փողոցում նվազագույնը 2 երթևեկության գծի առկայությունը: Ծայրահեղ աստիճանի տուժածների և առավելագույն կարևորություն ունեցող բեռների անհապաղ տեղափոխման համար համայնքում ուղղաթիռների վայրէջքի համար նախատեսված է հարթակ՝ քաղաքային մարզադաշտ:

Տրանսպորտայինհաղորդակցությանկապերիառաջնահերթվերականգնողականաշխատանքներիիրականացմանհերթականությունը.

Տրանսպորտային հաղորդակցություն	1. Առաջին կարգի ավտոճանապարհներով տրանսպորտային հաղորդակցությունն ապահովող ճանապարհներ և կամուրջներ, երկաթգծեր և կից կառույցներ, օդային հաղորդակցությունն ապահովող ավտոտրանսպորտային օբյեկտներ (թռիչքուղիներ) 2. Երկրորդ կարգի ավտոճանապարհներով տրանսպորտային հաղորդակցությունն ապահովող ճանապարհներ և կամուրջներ 3. Երրորդ կարգի ավտոճանապարհներով տրանսպորտային հաղորդակցությունն ապահովող ճանապարհներ և կամուրջներ 4. Ճանապարհներ և կամուրջներ՝ ընդունակ զգալի կրճատել տրանսպորտային հաղորդակցությունից կտրված բնակավայրերի (շրջանների) քանակը 5. Տրանսպորտային հաղորդակցության այլ օբյեկտներ

4.17 Դիակների ճանաչման և հուղարկավորման կազմակերպում և հաշվառում

Խոշոր աղետի դեպքում դիակների ճանաչման և հուղարկավորման կազմակերպման և հաշվառման պատասխանատուն համագործակցելով համայնքապետարանի և բնակավայրերի ղեկավարների հետ, հավաքագրում և ստեղծում է դիակների ճանաչման և հուղարկավորման կազմակերպման և հաշվառման կամավորական խմբեր: Դիակների ճանաչման և հուղարկավորման կազմակերպման և հաշվառման կամավորական խմբերը համագործակցում են Արտակարգ իրավիճակների նախարարության և Ոստիկանության մասնագետների հետ: Խմբերը ոստիկանության հետ համատեղ իրականացնում է դիակների ճանաչման գործընթացը, որից հետո իրականացնում հուղարկավորության թույլտվության տրամադրում:

Մահացածների ճանաչումը իրականացվում է Համայնքի ուժերով, եթե պայմաններից ելնելով հնարավոր չէ իրականացնել դատաբժշկական գործողություններ և դիահերձում Համայնքի ղեկավարի որոշմամբ իրականացվում է մահացածների հուղարկավորում, և հաշվառում, հուղարկավորման հողհատկացումը իրականացում է Համայնքի ղեկավարի կողմից:

Հուղարկավորման համար Համայնքը հատկացնում է տարածք և կազմակերպում հուղարկավորման արարողությունը, եթե հարազատները հնարավորություն չունեն ազգագրական գերեզմաններ օգտագործել:

Անհայտ դիակների հուղարկավորման համար հատկացվում է առանձնացված տարածք, հուղարկավորումից առաջ հաշվառելով և պահպանելով հետագա ճանաչման համար առկա պարագաներ (լուսանկարներ, ԴՆԹ (դեզօքսիռիբոնուկլեինաթթու) նմուշ և այլն):

Անհայտ դիակների հետ գտնված թանկարժեք իրերի պահպանումը կազմակերպում է Ոստիկանությունը:

4.18 Անհայտ կորածների և ընտանիքի անդամների միավորման, կորած/միայնակ մնացած երեխաների ու ծերերի անվտանգության կազմակերպում

Խոշոր աղետի դեպքում անհայտ կորածների և ընտանիքի անդամների միավորման, կորած/միայնակ մնացած երեխաների ու ծերերի հարցերով զբաղվող պատասխանատուն համագործակցելով համայնքապետարանի և բնակավայրերի ղեկավարների հետ, հավաքագրում և ստեղծում է դիակների անհայտ կորածների և ընտանիքի անդամների միավորման, կորած/միայնակ մնացած երեխաների ու ծերերի հարցերով զբաղվող կամավորական խմբեր: Անհայտ կորածների և ընտանիքի անդամների միավորման, կորած/միայնակ մնացած երեխաների ու ծերերի հարցերով զբաղվող կամավորական խմբերը

համագործակցում են Արտակարգ իրավիճակների նախարարության, Ոստիկանության և սոցիալական ապահովության ծառայության տարածքային բաժնի մասնագետների հետ: Խմբերը ոստիկանության հետ համատեղ իրականացնում է անհայտ կորածների որոնում, հետագայում հայտնաբերված անձանց միավորումը իրենց ընտանիքների կամ հարազատների հետ: Անհայտ կորածների որոնման ու դրանց ընտանիքների հետ միավորման կազմակերպման ժամանակ յուրահատուկ ուշադրություն է դարձվելու երեխաներին:

4.19 Հրատապ միջոցառումներ ուսումնական հաստատություններում

ԱՌԿ խորհրդի հատուկ ուշադրության կենտրոնում պետք է լինեն նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատությունները: Նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատությունները արտակարգ իրավիճակների սպառնալիքի կամ առաջացման դեպքում գործում են համաձայն իրենց հաստատության արտակարգ իրավիճակներում գործելու պլանների: Արտակարգ իրավիճակներում գործելու պլաններով նախատեսված տարահանման, պատսպարման, անհատական պաշտպանական միջոցներով ապահովման և այլ անհրաժեշտ միջոցառումները համաձայնեցված են համայնքապետարանի հետ և

Անհրաժեշտության դեպքում անհապաղ կազմակերպել աշակերտների և ուսուցիչների տարահանումը վնասված տարածքներից և տեղափոխել ապահով տարածքներ:

Այն դպրոցները և մանկապարտեզները, որոնք հետագայում հնարավոր չեն լինի շահագործել, այդ կրթօջախների սաները կբաժանվեն մյուս դպրոցների և մանկապարտեզների միջև ուսումնական պրոցեսը շարունակելու նպատակով:

Կազմակերպել և իրականացնել առաջնային որոնողափրկարարական, հրդեհաշիջման ու բուժապահովման միջոցառումներ:

Տարբեր ԱԻ դեպքում էլ ապահովել ուսուցման պրոցեսի շարունակականությունը, գտնել միջոցներ և ճանապարհներուսումնական հաստատությունների արագ վերականգման և վերաբացման համար:

4.20 Կենսաապահովման կազմակերպում

Խոշոր աղետների դեպքում անհրաժեշտություն է առաջանալու կազմակերպել բնակչության կենսաապահովում՝ նպատակ ունենալով ապահովել համայնքի տնտեսության կայունությունը և արագ վերականգնումը աղետից հետո, ինչպես նաև հետաղետային ժամանակահատվածում բնակչության տարրական կենցաղային հարցերի կարգավորումը: Կենսաապահովման կազմակերպման պատասխանատուն համագործակցելով համայնքապետարանի և բնակավայրերի ղեկավարների հետ, հավաքագրում և ստեղծում է կենսաապահովման կազմակերպման կամավորական խմբեր:

Ստորև ներկայացված տուժածներին սննդամթերքով և ջրով ապահովման չափաքանակների համաձայն, կենսաապահովման կազմակերպման կամավորական խմբերը չտուժած բնակավայրերից և հարևան համայնքներից հավաքագրում են սնունդ, ջուր, առաջին անհրաժեշտության պարագաներ, հագուստ և այլն՝ տուժած բնակիչներին տրամադրելու նպատակով: Անհրաժեշտության դեպքում իրականացվում է կարիքների գնահատում՝ բնակչության կենսաապահովման մասով (սնունդ, ջուր, առաջին անհրաժեշտության պարագաներ, հագուստ և այլն) և անհրաժեշտ օգնության համար ներկայացվում է հայտ մարզպետարան կամ կառավարություն:

Տուժածներին սննդամթերքով և ջրով ապահովման չափաքանակները(50 հոգու հաշվարկով , 3 օրվա համար).

Հ/հ	Անվանումները	Չափի միավոր	Քանակ
	Սնունդ և ջուր (50 հոգու հաշվարկով , 3 օրվա համար)		
1.	Թեփահանված աշորայի և ցորենի I տեսակի ալյուրի խառնուրդից հաց	կգ	90
2.	Ցորենի I տեսակի ալյուրից սպիտակ հաց	կգ	60
3.	II տեսակի ցորենի ալյուր	կգ	4,5
4.	Ձավարեղեն	կգ	15
5.	Մակարոնեղեն	կգ	5
6.	Կաթ և կաթնամթերք	կգ	75
7.	Միս և մսամթերք	կգ	15
8.	Ձուկ և ձկնեղեն	կգ	9
9.	Ճարպեր	կգ	7,5
10.	Շաքար	կգ	10,5
11.	Կարտոֆիլ	կգ	75
12.	Բանջարեղեն	կգ	27
13.	Աղ	կգ	4,5
14.	Թեյ	կգ	0,3
15.	Պանիր	կգ	3
16.	Ջուր (խմելու)՝ մաքրազտված ոչ հանքային - ամառային ամիսների ընթացքում	լիտր լիտր	375 750
17.	Սննդի պատրաստում, լվացում, այդ թվում՝ - սննդի պատրաստում և խոհանոցային ամանեղենի լվացում	լիտր լիտր	1125 525

	- անհատական ամանեղենի լվացում - դեմքի և ձեռքերի լվացում	լիտր լիտր	150 450

4.21 Հրատապ միջոցառումներ՝ ուղղված կացարանների ապահովմանը և կենցաղի կազմակերպմանը

Տարահանված բնակչությանը կացարաններով ապահովելու համար նախատեսվում է ընտրել չվնասված, անվտանգ դպրոցների ու մանկապարտեզների դահլիճներ և հասարակական այլ շենքեր շինություններ, ինչպես նաև ձեռք բերել վրաններ շենքերում չտեղավորված բնակիչների համար՝ միևնույն ժամանակ ապահովելով առաջնային անհրաժեշտության սննդով և ջրով ապահովելու հարցը, ստեղծել պայմաններ առաջացող աղբի հեռացման համար: Վրանների անհրաժեշտության պարագայում մարզպետարան կամ կառավարություն ներկայացվում է հայտ:

4.22 Գյուղատնտեսական կենդանիների պաշտպանության կազմակերպում

Գյուղատնտեսական կենդանիների պաշտպանությունն իրականացվում է անվտանգ վայր նրանց դուրսբերմամբ(հավելված N 5):

4.23 Համայնքում աղետների հետևանքների վերացման ուղղությամբ միջոցառումների անցկացում

Արտակարգ իրավիճակի առաջացման սպառնալիքի կամ ծագման դեպքում՝ համայնքի ղեկավարը ստանալով ազդարարում կամ տեսնելովավերվածություններ կամ այլաղբյուրներիցտեղեկանալովաղետիմասին անմիջապես կազմակերպում է.

- աղետի գոտու հետախուզություն,
- աղետների հետևանքների վերացման աշխատանքներ,
- բնակչության տարահանում անվտանգ տարածք,
- ունեցվածքի, գյուղատնտեսական կենդանիների տարահանում և փրկում,
- տուժած բնակչությանը բժշկական կամ առաջին օգնության տրամադրում,
- երկաթգծի, տեղական նշանակության ճանապարհների, միջհամայնքային ճանապարհների երթևեկության վերականգնում,
- կոմունալ-էներգետիկ տնտեսության, կապուղիների և կապի օբյեկտների աշխատանքների վերականգնում և բնակավայրերում այլ անհրաժեշտ վերականգնողական աշխատանքների իրականացում,
- տուժած բնակչությանը սննդով և առաջին անհրաժեշտության իրերով ապահովում,
- ԱՌԿ խորհրդին ներկայացնել կորստի հաշվետվություն:

Աշխատանքները արագ, օպերատիվ և արդյունավետ կազմակերպելու համար բնակավայրի ղեկավարը չտուժած բնակչությունից անմիջապես հավաքագրում է աղետների հետևանքների վերացման խմբեր (հրշեջ-փրկարարական աշխատանքների կազմակերպման, հասարակական կարգի պահպանման, բժշկական կամ առաջին օգնության, կենսաապահովման կազմակերպման, տարահանման կազմակերպման և այլ անհրաժեշտ խմբեր): Բնակավայրի օպերատորը չտուժած բնակչությունից անմիջապես հավաքագրում է խմբեր, որոնք կիրականացնեն հետախուզություն, կարիքների գնահատում, ինժեներական միջոցառումներ և այլ անհրաժեշտ աշխատանքներ: Հետախուզության արդյունքները, կարիքների գնահատման

տվյալները, աղետների հետևանքների վերացման ուղղությամբ իրականացված միջոցառումների մասին տեղեկատվությունը անմիջապես փոխանցվում է Աղետների ռիսկի կառավարման խորհուրդ: Բոլոր տուժած բնակավայրերը, որոնք պետք է դրսից ընդունեն փրկարարական, բժշկական և այլ ուժեր, պետք է նախատեսեն և ընտրեն անվտանգ տարածքներ նշված ուժերի տեղակայման համար: Չտուժած բնակավայրերի ղեկավարները բնակչության շրջանում հավաքագրում են կամավորների՝ ստեղծելով հրշեջ-փրկարարական աշխատանքների կազմակերպման, հասարակական կարգի պահպանման, կարիքների գնահատման, ինժեներական միջոցառումների ապահովման, կենսապահովման կազմակերպման, տարահանման կազմակերպման և այլ անհրաժեշտ խմբեր: Ստեղծված խմբերի մասին տեղեկատվությունը փոխանցվում է ԱՌԿ խորհուրդ, որի կողմից էլ ստեղծված խմբերը ուղարկվում են համապատասխան աշխատանքների կատարման վայրեր:

4.24 Մարդասիրական օգնության ստացման, բեռնաթափման, բաշխման և այլ պետություններից ժամանած փրկարարական ուժերի ընդունման կազմակերպում

Համայնքապետարանը աղետից հետո մինչև առաջին օրվա ավարտը օգնության հայտ է ներկայացնում Արտակարգ իրավիճակների հանրապետական կամ մարզային հանձնաժողովին:

Օգնության հայտը ձևակերպվում է գրավոր (հայերեն լեզվով):

Օգնության հայտը ներկայացվում է գործող կապի միջոցներով՝ համակարգիչ (ինտերնետ), հեռախոս, ֆաքս:

Օգնության հայտի ձևակերպման հիմք են հանդիսանում ստեղծված իրավիճակի եզրակացությունները, ճեպընթաց (արագ) գնահատման խմբերի գնահատականները՝ կարիքների գնահատման հարցաթերթիկներով և նախադպրոցական և հանրակրթական հաստատությունների կարիքների գնահատման հարցաթերթիկներով:

Միջազգային փրկարարական ուժերի և օգնության ընդունման, ստացման ու բաշխման միջոցառումները բաղկացած են՝մարդասիրական օգնության ընդունումից, մարդասիրական օգնության բաշխումից:

Մարդասիրական օգնությունը տրվում է ԱՌԿ խորհրդի հսկողությամբ՝ տուժած բնակավայրերի կողմից ներկայացված հայտերի հիման վրա:

4.25 Փոխգործողությունների կազմակերպում

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ աղետը լրջորեն խաթարում է հասարակության և համայնքի կենսագործունեությունը և գերազանցում է հասարակության կամ Համայնքին սեփական ուժերով հաղթահարելու կարողությունը, շատ կարևոր է ՀՀ պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների, զինվորական կայազորների, կազմակերպությունների, ինչպես նաև հարևան համայնքների հետ փոխգործողությունների կազմակերպումը: Փոխգործողություններ իրականացվում են հետևյալ ուղղություններով՝ տեղեկատվության փոխանակումը (ազդարարումը) միմյանց միջև, իրավիճակի գնահատումը (միմյանց շահերի համար), փրկարարական և անհետաձգելի աշխատանքների, հրդեհաշիջման, առաջին օգնության, տեղափոխումների, բնակչության տարահանման և այլնի:

Ստորևէ ներկայացված է <,Մերձմոսկովյան >> ԲԲԸ-ի կողմից տրամադրվող անձնակազմի ցուցակը և տեխնիկայի ցանկը:

Փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական և շրջակա միջավայրի վերականգնման ու մաքրման աշխատանքների իրականացմանը մասնակցող անձնակազմի ցուցակ <<Գյումրու կոմունալ ծառայություն>> ՀԲՀ և համայնքապետարանի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժին

Հ/հ	Անուն, ազգանուն	Պաշտոն	Հեռախոսա համար	Ժամանում (ժ+)	Ժամանման վայր	Նշումներ
1	Վարդգես Սամսոնյան	տնօրենի ժ/պ	098 400 144	1ժամ 30րոպե	համայնքապետարան	
2	Արման Շաբոյան	տնօրենի տեղակալ	0 312 2 22 14	1ժամ 30րոպե	համայնքապետարան	
3	Ռոմիկ Մելքոնյան	տնօրենի տեղակալ	0 312 2 22 14	1ժամ 30րոպե	համայնքապետարան	
4	Ազատ Խաչատրյան	բրիգադավար	0 312 2 22 14	1ժամ 30րոպե	համայնքապետարան	
5	Ռոբերտ Եգորյան	կոորդինատոր	0 312 2 22 14	1ժամ 30րոպե	համայնքապետարան	
6	Ստեփամ Պետրոսյան	բրիգադավար	0 312 2 22 14	1ժամ 30րոպե	համայնքապետարան	
7	Արտուշ Ավագյան	գլխավոր մասնագետ	093 188 246	1ժամ 30րոպե	համայնքապետարան	
8	Ռուբեն Մարտիրոսյան	գլխավոր մասնագետ	091 63 43 62	1ժամ 30րոպե	համայնքապետարան	

Տրանսպորտային միջոցների, տեխնիկայի և սարքավորումների ցանկ

Հ/հ	Կազմակերպության անվանումը	**Փոխադրամիջոցների քանակը**				Ժամանում	Ժամանման վայր
		Ավտոբուս	Միկրոավտոբուս	Հատուկ փոխադրամիջոցներ	Հատուկ տեխնիկա		
1.	Գյումրու համայնքապետարան	**15**	**36**	-	-	(ժ+2)	համայնքապետարան
2.							
3.							

V. ՀԱՄԱՅՆՔԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ /ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒՄ

ԱԻ արագ և համապատասխան արձագանքման գործողություններից հետո համայնքում սկսվում են վերականգնման/վերակառուցման աշխատանքները՝ ինչպես համայնքի և ՀՀ կառավարության ուժերով, այնպես էլ միջազգային աջակցող կազմակերպությունների կողմից իրականացվող աջակցությամբ:

Վերականգնման միջոցառումների նպատակն է համայնքի արագ վերականգնումն ու կենսագործունեության վերսկսումը, ներառյալ՝ բնակելի ֆոնդը, կեսապահովման համակարգը, զբաղվածությունը, առողջապահությունը, բարեկեցությունը, ուսուցումը:

Վերակառուցման/վերականգնման միջոցառումները ուղղված են ենթակառուցվածքների/կոմունալ-էներգետիկ համակարգերի, շինությունների կայունության ապահովմանն ու բարձրացմանը, դրանց արագ վերանորոգումը, շահագործումը և պահպանումը նպատակային ու արդյունավետ դարձնելու համար:

Համայնքի վերակառուցման/վերականգնման որակը ԱՌԿ խորհրդի կողմից լինելու է առաջնահերթ:Բնական աղետները հնարավորություն են տալիս

«անել ավելի լավը, քան կար»՝ բնակելի շենքերի, ճանապարհների, կրթական օջախների, հիվանդանոցների և այլ շենք-շինությունների որակը բարելավելու համար:Բնակելի շենքերի և հանրային ենթակառուցվածքների վերականգնումը պետք է իրականացվի անվտանգության բարձրագույն չափանիշներին համապատասխան, ինչը կնվազեցնի աղետների ռիսկը:

VI. ԱՌԿ ՊԼԱՆԻ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԸ

1) Համայնքի բնակավայրերի վտանգների, խոցելիության և կարողությունների սխեմատիկ պատկերներ (Պլանի հավելված N 1).
2) Աղետների ռիսկի կառավարման միջոցառումների օրացույց (Պլանի հավելված N 2).
3) 2020 թվականի աղետների ռիսկի կառավարման միջոցառումների պլան-ժամանակացույց (Պլանի հավելված N 3).
4) Համայնքի ազդարարման և տեղեկատվության փոխանակման սխեմա (Պլանի հավելված N 4).
5) Աղետի հավանական սցենարները և համայնքի բնակչության տարհանման ժամանակը(Պլանի հավելված N 5).
6) Ստանդարտ գործողությունների ընթացակարգերն ըստ բնորոշ աղետների (Պլանի հավելված N 6):

VII. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ԳՅՈՒՄՐԻ համայնքի ԱՌԿ պլանում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) Արտակարգ իրավիճակ՝ որոշակի տարածքում կամ օբյեկտում խոշոր վթարի, վտանգավոր բնական երևույթի, տեխնածին, տարերային կամ էկոլոգիական (բնապահպանական) աղետի, համաճարակի, անասնահամաճարակի (էպիզոոտիա), բույսերի և գյուղատնտեսական մշակաբույսերի լայնորեն տարածված վարակիչ հիվանդության (էպիֆիտոտիա), զենքի տեսակների կիրառման հետևանքով ստեղծված իրավիճակ, որը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել մարդկային զոհերի, մարդկանց առողջությանն ու շրջակա միջավայրին՝ զգալի վնասի, խոշոր նյութական կորուստների և մարդկանց կենսագործունեության բնականոն պայմանների խախտման:

2) Արտակարգ իրավիճակների կանխում՝ արտակարգ իրավիճակներ առաջացնող գործոնների կանխորոշում և վերացում:

3) Արտակարգ իրավիճակների հնարավոր հետևանքների նվազեցում՝ նախօրոք իրականացվող միջոցառումների համալիր՝ արտակարգ իրավիճակների ազդեցության հնարավոր մեղմացման համար:

5) Արտակարգ իրավիճակների հետևանքների վերացում՝ արտակարգ իրավիճակներում փրկարարական և անհետաձգելի վերականգնողական աշխատանքների կատարում՝ մարդկանց կյանքի ու գործունեության բնականոն պայմաններ ապահովելու համար:

6) Աղետ՝ բնակչության, նյութական, տնտեսական կամ բնապահպանական կորուստների այնպիսի մակարդակ, որը լրջորեն խաթարում է հասարակության և Համայնքի կենսագործունեությունը և գերազանցում է հասարակության կամ Համայնքին սեփական ուժերով հաղթահարելու կարողությունը:

7) Աղետի գոտի՝ արտակարգ իրավիճակների հետևանքով տուժած տարածք (բնակավայր, օբյեկտ) կամ տարածքի մի մաս:

8) Բնակչության պաշտպանության ձևերն են՝ տարահանում, պատսպարում և անհատական պաշտպանություն:

9) Տարհանում՝ վտանգավոր տարածքից անվտանգ տարածք՝ մարդկանց, կենդանիների և նյութական արժեքների ժամանակավոր տեղափոխում և տեղաբաշխում:

Պատսպարում՝արտակարգ իրավիճակներում զանգվածային ոչնչացման զենքի, ինչպես նաև ոչնչացման հատուկ միջոցների ազդեցությունից մարդկանց կյանքի ու գործունեության ժամանակավոր ապահովում՝ համապատասխան շինությունների տարածքում:

Անհատական պաշտպանություն՝մարդկանց՝ ճառագայթային, թունավոր և մանրէաբանական նյութերից պաշտպանության միջոցներով ապահովում:

12) Վտանգ՝պոտենցիալ գործընթաց կամ երևույթ, որը կարող է հանգեցնել մարդկային զոհերի, խեղանդամության, հիվանդությունների կամ այլ առողջական հետևանքների, գույքի վնասման, կենսամիջոցների և ծառայությունների կորստի, սոցիալական և տնտեսական ցնցումների կամ շրջակա միջավայրի վնասի: Կարելի է ասել, որ վտանգը պոտենցիալ երևույթներից և գործընթացներից ոչ ցանկալի հետևանքներ ունենալու ակնկալիքն է:

13) Խոցելիություն՝համայնքին, համակարգին կամ ակտիվին բնորոշ այն պայմաններն ու բնութագրերը, որոնք բարձրացնում են վերջիններիս վտանգի ավերիչ ազդեցություններին ենթարկվելու հավանականությունը: Կարելի է ասել, որ խոցելիությունը վտանգից անպաշտպանվածության աստիճանը կամ պոտենցիալ վտանգավոր երևույթի զարգացման արդյունքում ծագած կորուստների աստիճանն է (0-100)%:

14) Աղետիռիսկ՝վտանգի կամ վտանգավոր երևույթի հավանական ազդեցության հետևանքով հասարակական ծառայությունների, կենսամիջոցների և ունեցվածքի, առողջության վատթարացմամբ և մարդկային զոհերով արտահայտված հնարավոր աղետալի կորուստներ, որոնք կարող են առաջանալ որևէ Համայնքում կամ հանրության մեջ: Կարելի է ասել, որ աղետի ռիսկը վտանգի կամ վտանգավոր երևույթի աղետալի ազդեցության հավանական չափն է՝ արտահայտված կորուստներով:

15) Կարողություն՝կարողությունն առկա բոլոր պաշարների ամբողջությունն է, որը կարող է նպաստել անվտանգության ապահովմանը:

16) Դիմակայունություն՝ վտանգին դիմակայելու ունակությունն է, որն իր մեջ ներառում է վտանգի հետևանքներին դիմակայելը, դրան հարմարվելը և ժամանակին ու արդյունավետ վերականգնվելը, այդ թվում՝ համայնքի հիմնական գործառույթների պահպանման և վերականգնման միջոցով:

VIII. ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՍՄ-ԻՆՏԵԳՐԱԼ ԿԱՊԱՎՈՐՄԱՆ
ՍՄԿ-ԻՆՏԵԳՐԱԼ ՄԻԱՎՈՐՄԱՆ
ՍՄԵՆ – ԱՐՏԱՔԻՆ ՆԱԽԱԳԾԻՆ
ՍԿ – ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԻ ՆԱԽԱԳԾԻՆ
ՍՕ-ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ
<< ԼԳԼ –<ԱՅԼԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ
ԼՄԱՔՐ ՀԱՐԿԻ – << ՍԿԼ ԿԱՄ << ՍԿԼ ՍՈՒՄԱՔՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ
ՓԾ-ԿԻՆԻՄԱՅԻՆ ՇՈՒՄԱՅՈՒԹՅՈՒՆ
ՍԲԿ-ՀԻՆԳՆԱՅԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ